ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

Հասցե՝ ՀՀ, Սյունիքի մարզ,ք.Կապան Շահումյան 20/32, 3301:
Հեռ. (+374 285)5 25 63
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1200, գինը՝ 100 դրամ

ISSN 1829-3468

Սյունյաց երկիր

ՈՒՐԲԱԹ, 22 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2019Թ.
№ 23 (513)
www.syuniacyerkir.am

...Շատ առաջիններ վերջին պիտի լինեն, եւ վերջիններ՝ առաջին:

Աւետարան ըստ Մատթէոսի, Գլուխ ԺԹ, 30

Պողոս Տեր-Դավթյան

Խաչատուր Սասնեցի

100 տարի առաջ՝ 1919թ. նոյեմբերին, տեղի ունեցավ Զանգեզուրի հերոսամարտը, որն ավարտվեց թուրքական բանակի ջախջախմամբ

«Սյունյաց երկիրը» ս.թ. մայիսի 10-ին (N 10 (500)) հրապարակեց պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Համլետ Գեւորգյանի հոդվածը՝ «Զանգեզուրյան քառօրյա հերոսամարտի 100-ամյակը»:

Զանգեզուրը զավթելու հատուկ նպատակով Թուրքիայի կառավարությունը ռազմաճակատ էր գործուղել Հայոց ցեղասպանության կազմակերպիչներից երկուսին՝ Էնվեր եւ Նուրի փաշաներին:

Սակայն նրանց ներկայությունն անգամ չփրկեց իրավիճակը՝ Զանգեզուր-Սյունիքը մնաց աննվաճ, ինչպես դարեր շարունակ:

Զանգեզուրի հերոսամարտին հաջորդած իրադարձությունների մասին է Համլետ Գեւորգյանի նոր հոդվածը՝ *«Զանգեզուրի վերջնական մաքրումը թուրք բնակչությունից. հունվար 1920 թ.»*:

էջ 2

Դպրոցին պետք է «Հայոց եկեղեցու պատմություն» առարկան



Խաչատուր Բադալյան
Վերին Խոտանանի Պողոս Տեր-Դավթյանի անվան միջն. դպրոցի տնօրեն

Վերջին շրջանում որոշակի շրջանակների մատուցմամբ թեժ քննարկումներ են հանրակրթական դպրոցներում «Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի դասավանդման նպատակահարմարության վերաբերյալ: Լինելով իմ բազմահազար հայրենակիցների պես Հայ Առաքելական եկեղեցու հետեւորդ եւ ունենալով ավելի քան քառորդ դարյա մանկավարժական փորձ՝ խորապես համոզված եմ, որ այդ առարկայի դասավանդումն օգտակար է եւ անհրաժեշտ մատաղ սերնդի ճիշտ դաստիարակության համար: Ուստի կուզենայի անդրադառնալ եւ իմ առարկությունները ներկայացնել այն հիմնական տեսակետներին, որոնցով փորձ է արվում հիմնավորել տվյալ առարկայի դուրս մղումը դպրոցական առարկայացանկից:

Կարծիք է հայտնվում, որ հայ եկեղեցու պատմությունը հայ ժողովրդի պատմության մի մասն է եւ այն պետք է ինտեգրվի «Հայոց պատմություն» առարկայի մեջ: Այստեղ շահարկվում է երկու առարկայի անվան մեջ եղած ընդհանուր՝ «պատմություն» բառը: Միանշանակ պնդում եմ, որ «Հայոց եկեղեցու պատմություն» առարկան պարզապես պատմություն չէ: Այն ավելի շատ պետք է դիտարկել որպես բնագիտական առարկա, որտեղ մարդուն դիտարկելով նախ եւ առաջ որպես հոգեւոր էակ՝ (գոնե այստեղ ժխտողներ հավանաբար չեն լինի, չնայած՝ ով գիտի...) սովորողին ներկայացվում են այն կարեւորագույն օրենքներն ու օրինաչափությունները, որոնք գործում են մարդու հոգեւոր աշխարհում նույնպիսի անխախտությամբ, ինչպիսի անխախտությամբ գործում են, ասենք, ֆիզիկայի օրենքները նյութական աշխարհում: Այստեղ են աշակերտին մատուցվում այնպիսի կարեւոր թեմաներ, ինչպիսիք են «Բարոյականություն», «Մարդանհատի դերն ու առաքելությունը», «Ազատ կամք եւ բանականություն», «Խիղճ», «Հավատարմություն», «Ընտանիք», «Սեր», «Հայրենասիրություն» ու մի շարք այլ թեմաներ, եւ, փաստորեն ոչ միայն բերվում են պատմական դեպքերի ժամանակագրությունը, այլ ավելի շատ ձեւավորվում է աշխարհայացք՝ հիմնված քրիստոնեական բարոյագիտության վրա:

Ասվում է, որ առարկայի դասավանդումով քրիստոնեության քարոզ է իրականացվում եւ դրանցով ոտնահարվում են ազգային, կրոնական փոքրամասնությունների կամ աթեիստների իրավունքները:

Իսկ ի՞նչ է իրականում ՀԵՊ դասաժամերին մատուցվում սովորողին: Նրան բացատրվում է, թե ինչու պետք է լինել եղբայրասեր, բայց ոչ նախանձ, ինչու պետք է լինել ազնիվ, բայց ոչ՝ ստախոս, ինչու պետք է լինել հարգալից, բայց ոչ մեծամիտ, ինչու պետք է լինել հավատարիմ, բայց ոչ՝ դավաճան ու մատնիչ, ինչու պետք է լինել աշխատասեր, բայց ոչ ծույլ, ինչու պետք է լինել չափավոր, բայց ոչ ագահ:

Հիմա սա լավ է, թե՞ վատ, թե՞ առաքինություններն այլեւս «առաջադիմական» չեն: Բայց կա եւս մի կարեւոր հանգամանք: Վերջին մարդահամարի տվյալներով՝ Հայաստանի Հանրապետության ազգաբնակչության 87%-ն իրեն համարում է Հայ Առաքելական եկեղեցու հետեւորդ: Եթե մենք ապրում ենք ժողովրդավարական երկրում, ապա հարց է առաջանում. իսկ ինչու՞ չպիտի այստեղ ապրող յուրաքանչյուր երեխա ծանոթանա ճնշող մեծամասնության դավանած եւ ՀՀ սահմանադրությամբ ԲԱՑԱՌԻԿ դեր ունեցող, ԱՌԳԱՅԻՆ կոչված

էջ 7

Զմեռային զորակոչը կսկսվի նոյեմբերի 14-ից եւ կավարտվի հունվարի 31-ին

Հայաստանում պարտադիր զինվորական եւ այլընտրանքային ծառայությունների ձմեռային զորակոչը կանցկացվի նոյեմբերի 14-ից 2020 թվականի հունվարի 31-ը ներառյալ: Այդ մասին որոշման նախագիծն ընդգրկված է նոյեմբերի 7-ի նիստի օրակարգում:

Նախագծով նախատեսվում է 2019 թվականի ձմեռային զորակոչի շրջանակներում մինչեւ 2020 թվականի հունվարի 31-ը ներառյալ զորացրել օրենքով սահմանված ժամկետում շարքային կազմի պարտադիր զինվորական կամ այլընտրանքային զինվորական ծառայություն անցած զինծառայողներին, այլընտրանքային աշխատանքային ծառայությունից արձակել սահմանված ժամկետում այլընտրանքային աշխատանքային ծառայություն անցած ծառայողներին:

Միաժամանակ, ձմեռային զորակոչի կազմակերպման նպատակով կստեղծվի հանրապետական զորակոչային հանձնաժողով: ■

Զանգեզուրի կայազորային հոսպիտալը տեխնիկական հագեցվածությամբ չի զիջում քաղաքացիական հիվանդանոցներին

ՀՀ բուժծառայողի օրվան ընդառաջ ՀՀ Զինված ուժերի գլխավոր շտաբի վարչական ապարատի տեղեկատվական բաժինը ԶԼՄ ներկայացուցիչների համար ՀՀ ՊՆ «Զանգեզուրի կայազորային հոսպիտալ» պետական հիմնարկում կազմակերպել էր շրջայց: Հոսպիտալը 2011-2013 թվականներին եղել է լավագույնը հանրապետությունում:

«Արմենպրես»-ի հաղորդմամբ՝ հոսպիտալը պարբերաբար վերազինվում է նոր տեխնիկայով, եւ գործընթացը շարունակական է:

«Զանգեզուրի կայազորային հոսպիտալ» պետական հիմնարկի պետ, փոխգնդապետ Վարդան Ավագյանը շեշտեց, որ տեխնիկական հագեցվածությունը բավարար է զինծառայողներին համապատասխան բուժօգնություն ցույց տալու համար:

«Մեզ մոտ բժիշկների թիվն է մի փոքր քիչ, սակայն հույս ունենք, որ առաջիկա զորակոչի ժամանակ որոշ չափով կհամալրվի: Չնայած այդ ամենին, մեր հոսպիտալի բոլոր բժիշկներն իրենց առջեւ դրված խնդիրները կատարում են հավուր պատշաճի, որի ապացույցներից մեկը 2011-2013 թթ. հանրապետության լավագույն հոսպիտալ ճանաչվելու փաստն է: Այդ մրցանակն արդեն չի գործում, սակայն մենք շարունակում ենք աշխատել նույն ոգով եւ ավելի ենք կատարելագործվում», – ասաց Ավագյանը եւ հավելեց, որ իրենց հոսպիտալը սպասարկում է նաեւ քաղաքացիներին:

Ինչպես նշեց հոսպիտալի պետը, իրենց կողմից սպասարկվող տարածքի ոչ մի զորամասում այս պահի դրությամբ չկա սեզոնային ոչ մի հիվանդության բռնկման դեպք: Ավագյանն ընդգծեց, որ իրենք ցանկանում են հոսպիտալում ունենալ օրինակ՝ համակարգչային տոմոգրաֆ:

«Հոսպիտալի համար արդեն գնվել է

էջ 2

Օրակարգում կրթության որակի բարելավման հարցերն են

Հարցազրույց «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի Կապանի մասնաճյուղի տնօրեն, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Արթուր Կոստանդյանի հետ:

– **Պարոն Կոստանդյան, մեր զրույցը սկսենք մի անսովոր հարցով. ո՞րն է այսօր մասնաճյուղի ամենանեղ օղակը, այսօր ի՞նչն է Ձեզ ամենաշատը մտահոգում, երբ մտնում եք մասնաճյուղի դռներից ներս:**

– Որպես մասնաճյուղի տնօրեն եւ դասախոս, բնական է, որ ինձ ամենաշատը մտահոգում է որակյալ կրթության ապահովումը եւ ՀԱՊՀ Կապանի մասնաճյուղի շարունակական զարգացումը, որը հստակ շարադրված է ինչպես իմ նախընտրական ծրագրում, այնպես էլ մասնաճյուղի ներկայիս ռազմավարական պլանում: Դա մի շարք խնդիրների համալիր լուծում է, եւ հնարավոր չէ առանձնացնել ինչ-որ կոնկրետ մեկը:

Իսկ հրատապ լուծում պահանջող խնդիրներից կարելի է առանձնացնել, ինչպես անվանեցիք՝ նեղ օղակ. ես կնշեմ, օրինակ, ՀՀ-ում 2020թ. հունվարի 1-ից նախատեսվող նվազագույն աշխատավարձի սահմանաչափի բարձրացումից բխող՝ բոլոր աշխատակիցների աշխատավարձը բարձրացնելու անխուսափելի պահանջը, որը չափազանց դրական երեւույթ է աշխատողների, բայց լուրջ մարտահրավեր՝ համեստ ֆինանսական կարողություն ունեցող մեր մասնաճյուղի համար: Այդ խնդրի լուծման համար փորձում ենք առանց ցնցումների ելքեր գտնել: Նույնիսկ այս պայմաններում նախատեսվում է նաեւ, արդեն ավանդույթ դարձած, 13-րդ աշխատավարձը: Առաջիկայում, հավանաբար, կիրականացվի պլանավորված կառուցվածքային փոփոխություն, որը հնարավորություն կընձեռի տնտեսել վարչատնտեսական ծախսերը եւ դրանք նպատակաուղղել աշխատավարձերի բարձրացմանը: Գուցե ճիշտ կլիներ, որ ավելացվեր մասնաճյուղերին տրվող բյուջետային միջոցները, կամ էլ մասնաճյուղը ստիպված կլինի դիտարկելու ուսման վարձավճարների բարձրացման հարցը: Ինչպես նաեւ, ցանկալի կլիներ, մասնաճյուղի զարգացման որոշ հարցերում մարզի պղնձամոլիբդենային կոմբինատների աջակցությունը, որ մասնաճյուղը հնարավորություն ունենար տնտեսված ֆինանսական միջոցները նպատակաուղղել աշխատավարձերի բարձրացմանը: Օրինակ, արդեն դիմել ենք «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ՝ արեւային էլեկտրակայանի տեղադրման առաջարկ-խնդրանքով:

– **Մասնաճյուղի անվանումը նաեւ «հիմնադրամ» բառն է ընդգրկում: Կբացատրե՞ք, թե ինչ հիմնադրամի մասին է խոսքը:**

– Խոսքը ՀԱՊՀ հիմնադրամի մասին է, որը ՀՀ կառավարության որոշմամբ է հիմադրվել եւ անդամություն չունեցող ոչ առեւտրային կազմակերպություն է: Հիմնադրամի մասին սպառիչ տեղեկատվություն կարող եք ստանալ ՀՀ քաղաքացիական օրենսգրքից, «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքից, «Բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքից եւ այլ համապատասխան օրենքներից, ինչպես նաեւ ՀԱՊՀ ու ՀԱՊՀ Կապանի մասնաճյուղի կանոնադրություններից: Հիմնադրամը հնարավորություն է տալիս ավելի լայն տնտեսական գործունեություն ծավալել: ՊՈԱԿ-ներից հիմնադրամ վերակազմակերպելու գործընթացը շարունակվում է հայաստանյան բուհերում, օրինակ, ներկայումս այդ գործընթացի մեջ է «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ը:

– **Այս օրերին մամուլում, տարբեր հարթակներում քննության առարկա է դարձել հայոց լեզու, հայ գրականություն, հայոց պատմություն առարկաների ուսուցումը բուհերում ոչ պարտադիր դարձնելու՝ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Արայիկ Հարությունյանի նախաձեռնությունը: Ձեր տեսակետը կուզենայինք իմանալ խնդրո առարկայի առնչությամբ:**

– Նախ նշենք, որ ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը քննարկելու համար օրենքի աշխատանքային տարբերակը սահմանված կարգով հղել է բոլոր շահագրգիռ կազմակերպություններին՝ քննարկելու համար: Փաստորեն բոլոր նշված կազմակերպություններին հնարավորություն էր ընձեռված ներկայացնելու իրենց առաջարկներն ու դիտողությունները: Մասնավորապես՝ ՀԱՊՀ-ն նախարարություն է

էջ 7

Զանգեզուրի կայազորային հոսպիտալը տեխնիկական հագեցվածությամբ չի զիջում քաղաքացիական հիվանդանոցներին

էջ 1 *էնդոսկոպիկ սարքավորում, որը մոտ ապագայում կտրվի մեզ: Այս ամենը շարունակական է լինելու, որպեսզի սկսենք շատ ավելի որակյալ բուժզննում իրականացնել»,* – նշեց հոսպիտալի պետը:

Շրջայցի ընթացքում լրագրողները հնարավորություն ունեցան ծանոթանալու հոսպիտալի տարբեր բաժանմունքներին, որոնցից մեկը նախատեսված է հատուկ ժամանակահատվածների համար:

Այդ բաժանմունքում զինծառայողները բուժում կարող են ստանալ միայն այն դեպքում, երբ լինի որեւէ հիվանդության համաճարակ է կամ պատերազմական իրավիճակներում շատ վիրավորների առկայության պարագայում:

Հոսպիտալի Ճառագայթային ախտորոշման կաբինետի ռենտգեն լաբորատորիայի լաբորանտ, ենթասպա Նաիրա Մարկոսյանը, ով արդեն 20 տարուց ավելի ծառայում է, լրագրողների հետ զրույցում նշեց, որ իրենց մոտ իրականացնում են մարմնի տարբեր հատվածների հիմնականում ոսկրային հետազոտություն:

Նա նշեց, որ այդ ռենտգեն սարքը վաղուց են ձեռք բերել, եւ այն արդարացնում է իրենց ակնկալիքները: *«Մեր աշխատանքը, եթե համեմատենք քաղաքացիական հիվանդանոցների հետ, ավելի բարդ ու դժվար է: Երբ դեռ նոր էի սկսել աշխատել որպես բուժծառայող, զինծառայողները գալիս էին եւ ասում իրենց գանգատները, ես լաց էի լինում, քանի որ սիրտս իրենց համար ցավում էր: Տարիների ընթացքում կոփվել եմ, սակայն զինվորների հանդեպ հատուկ վերաբերմունքը մնացել է նույնը»,* – ասաց Մարկոսյանը:

Նա ընդգծեց, որ ծառայության 20 տարվա ընթացքում հոսպիտալում բազմաթիվ փոփոխություններ են եղել՝ սկսած վերանորոգումից մինչեւ տեխնիկական հագեցվածություն:

Բաժանմունքներից մեկն էլ վիրաբուժականն էր. բաժանմունքի պետ Գագիկ Մեսրոպյանը, պատմելով հոսպիտալի մասին, նշեց, որ այն տարիների ընթացքում շատ է բարեփոխվել եւ տեխնիկապես վերազինվել է:

«Մեզ մոտ տեղադրված են ժամանակակից սարքավորումներ, բոլոր հարմարությունները ստեղծված են եւ՛ բժիշկների, եւ՛ զինծառայողների համար: Չնայած տեխնիկական հագեցվածությանը՝ նաեւ նորերի կարիք ունենք, օրինակ՝ լապարոսկոպիկ վիրաբուժության համար նախատեսված գործիք», – ընդգծեց Մեսրոպյանը:

Շրջայցի վերջում հոսպիտալի տնօրեն Վարդան Ավագյանը շնորհավորեց բոլոր բուժծառայողներին՝ մասնագիտական տոնի կապակցությամբ:

«Ցանկանում եմ, որ մեր զինծառայողներին բուժօգնություն տրամադրենք միայն խաղաղ պայմաններում, կյանքի որակն ավելի լավացնելու նպատակով», – ընդգծեց փոխգնդապետը:

Նոյեմբերի 17-ը զինվորական տոնացույցում նշվում է որպես Բուժծառայողի օր: ■

«Սյունիք» ջրօգտագործողների ընկերություն. փապալված կառույցը դուրս է գալիս փակուղային վիճակից

Մոտ երեք տարի առաջ՝ 2016 թ. դեկտեմբերի վերջին, մարզում գործող ջրօգտագործողների չորս ընկերություն, որոնք ներկայացնում էին Սյունիքի չորս տարածաշրջանը (Սիսիան, Գորիս, Մեղրի, Կապան) միավորվեցին՝ ստեղծելով «Սյունիք» ջրօգտագործողների ընկերությունը (ՋՕԸ): Ի սկզբանե նպատակ էր դրված առկա ռեսուրսները, ջրային պաշարներն ավելի արդյունավետ օգտագործել, ինչպես նաեւ բարձրացնել ջրօգտագործողների սպասարկումը: Նախկին տարածաշրջանային ընկերությունները միավորվեցին մի կառույցի մեջ, որի դեբիտորական պարտքը մոտ 34 մլն դրամ էր: Անցած երեք տարում այդ պարտքը ոչ միայն նվազեց, այլեւ տարեցտարի ավելացավ՝ կազմելով 74.6 մլն դրամ, որից 43.2 մլն «Սյունիք» ընկերության Մեղրու տեղամասինն է, 21.5-ը՝ Գորիսինը, 9.5-ը՝ Սիսիանինը, Կապանի տեղամասի պարտքն անհամեմատ նվազ է: Սրան գումարած ութ ամսվա չվճարված աշխատավարձի պարտքը, որի մասին գրեց նաեւ հանրապետական մամուլը:

Այս տարվա մայիսին տեղի ունեցավ «Սյունիք» ՋՕԸ վարչության խորհրդի նիստ, որի օրակարգում նոր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարի առաջադրումն ու նշանակումն էր:

Ահա վեց ամիս է՝ ջրօգտագործողների սյունիքյան կառույցը ղեկավարում է Գոռ Բարսեղյանը՝ ծնված 1987 թվականին. ավարտել է Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի Կապանի մասնաճյուղը, մասնագիտությամբ՝ ծրագրավորող: Մինչ այդ աշխատել է հանքարդյունաբերությունում, եղել է «Թունել» ՓԲԸ գործադիր տնօրեն:

Ըստ տարածաշրջանների տեղամասերի պետեր են նշանակված՝ Վահագ Միքայելյանը (Գորիս), Նաիրի Հովհաննիսյանը (Սիսիան), Գեւորգ Առաքելյանը (Մեղրի): Քանի որ «Սյունիք» ՋՕԸ-ի նստավայրը Կապանում է, մարզկենտրոնում առանձին տեղամաս չեն նախատեսել:

Ինչպես երեւում է վերոգրյալ թվերից, երիտասարդ ղեկավարին տխուր ժառանգություն է բաժին ընկել, խոսքը նախեւառաջ մատակարարված ջրի դիմաց չվճարված գումարների մասին է: «Սյունիք» ջրօգտագործողների ընկերությունը սպասարկում է մոտ 1500 հեկտար հողատարածություն, ունի 5100 բաժանորդ, 135 աշխատակից, միջին աշխատավարձը՝ 80 հազար դրամ, ամենաքիչ աշխատողները՝ Կապանի տեղամասում՝ տասը աշխատակից, իսկ ընկերության Մեղրու տեղամասում միայն 15 ջրբաշխ է աշխատում:

«Հոկտեմբերի վերջին ավարտեցինք ջրամատակարարումը, վերջինը՝ Մեղրիում, պայմանավորված տարածաշրջանի չորային կլիմայով. մինչեւ նուռը չի հասունանում, վերջին բերքը չեն հավաքում, ջրամատակարարումը չենք համարում փակված, ի դեպ, Սյունիքում ոռոգման ջուր առաջինը հենց մեղրեցիներն են ստանում, Մեղրիում ոռոգման տարեշրջանը մարզի մյուս տարածաշրջանների համեմատ վաղ է սկսվում՝ մարտի մեկից», – փոխանցում է Գոռ Բարսեղյանը:

Ի դեպ նշենք, որ ոռոգման ջրի մեկ խորանարդի սակագինը 11 դրամ է, որի կեսը կառավարությունը պահուստային ֆոնդից փոխհատուցում է որպես լրավճար (դոտացիա). սա միայն Մեղրու տարածաշրջանին է վերաբերում:

Փաստորեն ընկերության համար գործնականում տարին ավարտված կարելի է համարել, բայց միայն՝ ջրամատակարարման մասով: Քանզի այս օրերին ընկերությունում զբաղված են նորոգման աշխատանքներով, մատակարարված ջրի դիմաց վճարների հավաքումով, եւ այս խնդրում դժվարություններ են ծագում:

«Խնդիրը ծագում է այն դեպքում, երբ մարդ միայն հողագործությամբ է զբաղվում, նրա ապրուստի միջոցն իր ձեռքերով աճեցրած բերքից ստացած եկամուտն է, այդ դեպքում բարձր բերքի երաշխիքը ոռոգման ջուրն է, որը մատակարարված է ողջ տարեշրջանում, բայց ոռոգման ջուր սպառողը բերք վաճառելուց հետո բոլոր կոմունալ-բնակարանային վարձերը մուծում է (գազ, լույս, խմելու ջուր, հեռախոս), սակայն երբ հերթը հասնում է ոռոգման ջրի դիմաց վճարմանը, թերանում է: Բայց չէ՞ որ ոռոգման ջրի շնորհիվ է պտու-

էջ 8

Զանգեզուրի վերջնական մաքրումը թուրք բնակչությունից.

ÑáõÝí³ñ 1920 Ã.

ՀԱՄԼԵՏ ԳԵՎՈՐԳՅԱՆ,
պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Զանգեզուրի լեռնականները կովկասյան թուրքերի (թաթար) եւ նրանց սատարող հավատակիցների դեմ պայքարելու հրաշալի մարտական դպրոց էին անցել: Սասունի 1904 թ. եւ կովկասահայության 1905–1906 թթ. ինքնապաշտպանական մարտերի հերոսների՝ Սեբաստացի Մուրադի, Քեռու, Կայծակ Առաքելի, Գյումուշխանցի Ավոյի, Մեշեդի Ավետիսի եւ բազում այլ բազմափորձ ֆիդայիների առաջնորդությամբ զանգեզուրցիներն անմոռանալի ջարդ տվեցին հայկական բնակավայրերն ասպատակող թուրք հրոսակախմբերին: 1918-1919 թթ. Անդրանիկի գլխավորած արեւմտահայ մարտական ուժերի գործուն աջակցությամբ զանգեզուրցիները դարձյալ հերոսական ինքնապաշտպանությամբ անառիկ պահեցին իրենց բնակավայրերը մահմեդական հրոսակախմբերի ոտնձգություններից ու ասպատակություններից:

Զանգեզուրին տիրելու Ադրբեջանի նկրտումներն ավելի են ուժեղացել հատկապես 1918 թ. դեկտեմբերից սկսած, երբ Շուշիում հաստատվեց անգլիական զինվորական ներկայացուցչությունը: Անգլիացիների համար Զանգեզուրի ու Արցախի խնդիրը վճռված էր: Անգլիացիների որոշմամբ Հայաստան աշխարհի երկու պատմական գավառները՝ Զանգեզուրն ու Արցախն իրենց հոծ հայ բնակչությամբ պիտի մասն կազմեին Ադրբեջանական Հանրապետության: Հիմք ունենալով այդ գավառների նկատմամբ կայացրած վերոհիշյալ վճիռը՝ Ադրբեջանի կառավարությունը Կովկասում Անգլիայի առաքելության ղեկավար, գեներալ Թոմսոնի համաձայնությամբ Արցախ-Զանգեզուրի ընդհանուր նահանգապետ է նշանակում դոկտոր Խոսրով բեկ Սուլթանովին, որը հայտնի էր իր հայատացությամբ ու ջարդարարի համբավով:

«Յունարի 17-ին, – գրում է Եղիշե Իշխանյանը, – *Դոքտ. Խոսրովբէկ Սուլթանովը, Ադրբէջանի կառավարութեան կողմից, զօրավար Տօմսոնի համաձայնութեամբ նշանակած իբրեւ Ղարաբաղի նահանգապետ, գալիս է Շուշի ի հեծուկս հայերի: Ադրբէջանի կառավարութիւնը Ղարաբաղի նահանգապետ նշանակելով, Հայաստանի կառավարութեանը կանգնեցնում էր կատարած փաստի առջեւ, յուսալով տէր դառնալ Ղարաբաղին, թիկունքին ունենալով զօրավար Տօմսոնին, որպէս ուժեղ յենարան»:*[1]

Ի պատասխան այդ նշանակման, ՀՀ արտաքին գործոց նախարար Ս. Տիգրանյանը վճռական բողոք է ներկայացնում Ադրբեջանական կառավարությանը՝ հայտարարելով, որ Արցախն ու Զանգեզուրը Հայաստանի անբաժանելի մասն են:[2]

Իհարկե, Ս. Տիգրանյանի բողոքը չէր կարող լուրջ ուշադրության արժանանալ, քանզի վիճակն Անգլիայի հովանավորությամբ արդեն գցված էր: Ադրբեջանը բազմապատկում է ջանքերը՝ վերջնականապես նվաճելու Արցախն ու Զանգեզուրը:

Եթե 1919 թ. գարնանն ու ամռանն Ադրբեջանի իշխանությունները Երեւանում հավատարմագրված իր դիվանագիտական ներկայացուցիչ Թեքինսկու անմիջական ղեկավարությամբ Հայաստանի ապստամբ շրջանների թուրք բնակչությանն օգնում էր ֆինանսներով, զենքով, սպաներով եւ հրահանգիչներով, ապա Զանգեզուրի նկատմամբ ոչ միայն կիրառում էր վերոհիշյալ միջոցները, այլեւ ուղղակիորեն ապավինելով զենքի ուժին՝ զորքով, որոնց միացել էին նաեւ Զանգեզուրի հարեւան Հաճի-Սամլուիի քրդական հեծելախմբերը, գեներալ Շիխլինսկու եւ դոկտոր Խոսրով-բեկ Սուլթանովի գլխավորությամբ Գորիսի հյուսիսային ուղղությամբ հարձակվում է Զանգեզուրի վրա:

Գեներալ Շիխլինսկու առաջնորդությամբ Զանգեզուր ներխուժած բանակը բաղկացած էր հեծյալ ու հետեւակ զորամասերից, որոնք համապատասխանաբար ունեցել են 800 եւ 4000 զինվորներ: Բացի դրանից, ազերի բանակն իր զինանոցում ունեցել է 12 հրանոթ ու ավելի քան երեք տասնյակ գնդացիրներ: Բանակի կազմում Զանգեզուր է ներխուժել 400 հեծյալներից բաղկացած քրդական հրոսակախումբը: Միաժամանակ զենքի պիտի դիմեր Զանգեզուրի մահմեդական բնակչությունը:[3]

Հայաստանի Հանրապետության կառավարության հանձնարարությամբ Զանգեզուր գործուղված գնդապետ Արսեն Շահմազյանի գլխավորությամբ զանգեզուրցիները մի շարք ճակատամարտերում ջախջախիչ պարտության մատնելով գեներալ Շիխլինսկու գլխավորած Ադրբեջանի կանոնավոր զորագնդերին եւ մահմեդական հրոսակախմբերին, փայլուն հաղթանակներ նվաճեցին:

Ըստ պաշտոնական տվյալների՝ քառօրյա մարտերը տեղի են ունեցել Տեղ, Կոռնիձոր, Բայանդուր ու Խոզնավար գյուղերի մերձակայքում: Զանգեզուրի մարտական ուժերը որպես ռազմավար հակառակորդից վերցրել են 14 գնդացիր, մեծ քանակությամբ զենք ու զինամթերք, ինչպես նաեւ 150 գերի:[4]

Գեներալ Շիխլինսկու առաջնորդած բանակի ու Զանգեզուրի թուրք հրոսակախմբերի ջախջախիչ պարտությամբ փաստորեն տապալվում է գավառն Ադրբեջանի Հանրապետության անքակտելի մասը դարձնելու ազերի իշխանությունների ծրագիրը:

1919 թ. Հայաստանի Հանրապետության թուրքաբնակ շրջանները խաղաղեցնելուց ու նույն տարում Զանգեզուրում գեներալ Շիխլինսկու առաջնորդած բանակը ջախջախելուց ու նվաճած հաղթանակից հետո, Հայաստանի կառավարությունը վերջապես փոքր-ինչ հնարավորություն է ստանում ուշադրությունը կենտրոնացնելու նաեւ Արցախի եւ Զանգեզուրի վրա: Զանգեզուրի, ապա նաեւ Արցախի խնդիրը վերջնականապես լուծելու հերթն այժմ արդեն Հայաստանի կառավարությանն էր:

ՀՀ կառավարության 1919 թ. նոյեմբերի 26-ին կայացրած որոշմամբ, Զանգեզուրի քաղաքացիական իշխանության կոմիսար է նշանակվում Ս. Մելիք-Յոլչյանը, իսկ զինվորական մասի կոմիսար, այն է՝ զինված ուժերի հրամանատար՝ գեներալ Ղազարյանը, որոնք ժամանելով Գորիս, պիտի փոխարինեին գնդապետ Արսեն Շահմազյանին:[5]

Ս. Մելիք-Յոլչյանի նախագահությամբ գործող քաղաքային իշխանությունը (վարիչների խորհուրդ) Զանգեզուրը բաժանել էր երկու գավառի. *«1. Բուն Զանգեզուր, Տաթեւ, Դարաբաս, Սիսիան՝ Զանգեզուր գավառ անունով, 2. Ղափան, Բաղաբերդ-Գեղվայ ձոր, Արեւիք եւ Գողթն՝ Կապար Գողթ անունով»:* [6]

Միաժամանակ Զանգեզուրը բաժանվել է երեք զինվորական շրջանների: Առաջին շրջանի՝ Սիսիանի հրամանատարն է Պողոս Տեր-Դավթյանը, երկրորդի՝ Կապարգողթի (Ղափան, Գենվազ, Գողթան)՝ հրամանատարը Գարեգին Նժդեհը եւ երրորդը՝ բուն Զանգեզուրը, այսինքն՝ Գորիսը իր շրջակա գյուղերով:

Նշելով Զանգեզուրի առաջին եւ երկրորդ զինվորական շրջանների հրամանատարների անունները՝ Ս. Վրացյանը չի ներկայացնում երրորդ զինվորական շրջանի հրամանատարին, թեպետ Գորիսում է գտնվել գեներալ Ղազարյանի հրամանատարական կետը:

Յուրաքանչյուր զինվորական շրջանի հրամանատարությանը կից գործել է զինվորական շտաբ, որին ենթարկվել են մարտական խմբերի հրամանատարները:Նրանց գլխավորությամբ գավառում կազմակերպվել է զորահավաք, որի արդյունքում *«25-50 տարեկան բոլոր տղամարդիկ դրած էին զէնքի տակ, երկրապահ զինորութեան դրութեամբ, 20-25 ընտիր սպաների ղեկավարութեան տակ»:*[7]

Նախորդ տարիներին Զանգեզուրում բացմիցս կրկնվող հայ-թուրքական զինված բախումներն ու գավառում տիրող իրական կացությունը հավաստում էին, որ Զանգեզուրը միայն տեղի մարտական ուժերով թուրք բնակչությունից մաքրելը չափազանց դժվարին խնդիր էր: ՀՀ կառավարությունը՝ հիմք ընդունելով այդ իրողությունը, Զանգեզուրի խնդիրը վերջնականապես լուծելու նպատակով եւ ի պատասխան Ադրբեջանի իշխանությունների կողմից Խոսրով-Բեկ Սուլթանովին Զանգեզուր-Արցախի գլխավոր նահանգապետ նշանակելու որոշմանը, գնդապետ Արսեն Շահմազյանի հեռանալուց հետո, Դրոյին նշանակում է Զանգեզուր-Արցախի նահանգապետ ու մարտական ուժերի ընդհանուր հրամանատար: ՀՀ կառավարության հրահանգով, Դրոն 1919 թ. դեկտեմբերի վերջերին 600 զինվորներով հասնում է Գորիս: Նրա ժամանումով զորահավաքի ու մարտական խմբեր կազմավորելու գործընթացն ավելի է արագացվել, ընդ որում՝ Զանգեզուրյան մարտական ուժերի կազմակերպման նախապատրաստական աշխատանքները կատարվել են խիստ քողարկված, հակառակորդի համար աննկատ:

Զանգեզուրի եւ Արցախի հարցի լուծումը վերջնականապես վճռելու հանձնարարությունը Դրոյին վստահելու իրողությունը պատահական չէր: Այդ շրջանների պատասխանատու գործիչների կողմից գործի ղեկավարումը ստանձնելու վերաբերյալ առաջարկություններ նրան արվել էին բազմիցս: Համաձայն Արցախի Ազգային Խորհրդի նախագահ Եղիշե Իշխանյանի հավաստման՝ այդ հանձնարարության իրագործումը Դրոյին վստահելու առաջարկության նախաձեռնողներից մեկը եղել է հենց ինքը: Առաջին անգամ նրա կողմից համանման առաջարկություն Դրոյին արվել է նույն տարվա սեպտեմբերի 16-ին, եւ նրանից ստացել է հումորով համեմված հետեւյալ պատասխանը. *«Այ դարաբաղցի, Զանգեզուր-Արցախ անունով շարունակ թնդացնում եք օդը, բայց չկարողացաք մի Ադրբեջանի հախիցը գալ, վախեցաք, տեսնո՞ւմ ես՝ Սուրմալուն քրդերի հախիցը ոնց է գալիս:*

Տեսնում եմ, որ Դրոն իր հումորով ինձ ձեռք է առնում, ասացի՝ «Դրո, խօսքը մէջներիս, էն ղէյրաթը, որ քո մէջ կայ, շնորհիւ քո սիւնեցի մօր արեան է, որ անցել է քեզ (Դրոյի մայրը ծնունդով Սյունեցի է՝ Սիսիանի շրջանի Մազրա գյուղից - Հ.Գ.): Այդ խեյրաթով պարտական ես Սյունիքին:

Դրօն չկարողացաւ զսպել ծիծաղը եւ մենք էլ ծիծաղեցինք:

– Լաւ, հանաքը թողնենք, խնդիրը լուրջ քննութեան է առնւած, ասաց Դրօն, եւ պիտի կարգադրի անպայման»: [8]

Այս նույն առաջարկությունը Ե. Իշխանյանը կրկնել է նաեւ իրենց հաջորդ հանդիպման ժամանակ:

«Նոյեմբերի 1-ին, – գրում է Ե. Իշխանյանը, – *Դրոյի մօտ եմ, խնդրում եմ միջնորդել զինորական նախարարի մօտ՝ Արցախի սպաներն հաշվելու իբրեւ հայկական բանակի սպաների, որոնց ցուցակը ներկայացրել է Ա. Վարդապետեանը, ապա իմ կարծիքն եմ յայտնում, որ ինքը անցնի Զանգեզուր որպէս Զանգեզուր-Արցախի ռազմական ուժերի ընդհանուր հրամանատար, օգնականներ ունենալով Ա. Շահմազեանին, որը կվարէ միաժամանակ քաղաքացիական-վարչական գործերը, եւ Գ. Նժդեհին, որը կը մնայ Ղափանում եւ Գողթնում այնտեղի ինքնապաշտպանական գործը վարելու:*

«Դրօն պատասխանում է, որ ինքը որպես զինորական նախարարի օգնական հեշտութեամբ չի կարող հեռանալ Երեւանից, անկախ իր կամքից, սակայն խոստանում է լրջորեն զբաղվել այդ խնդրով»: [9]

Այդ նույն՝ Զանգեզուր եւ Արցախ մեկնելու առաջարկությունը, մեկ անգամ եւս նրան արվել է նոյեմբերի 14-ին, այս անգամ արդեն Գողթնի գավառապետ Աշոտ Մելիք Մուսյանի կողմից, բայց հարցի վերջնական լուծումը դարձյալ փոքր-ինչ ձգձգվել է:

«...Զանգեզուրից, – նշում է Ե.Իշխանյանը, – եկաւ Աշոտ Մելիք Մուսեանը, Արսէն Շահմազեանի կողմից խոսելու կառավարութեան հետ...Աշոտը բարձր տրամադրութեամբ պատմում է Զանգեզուրի կռիւների մասին մանրամասնօրէն (նկատի ունի Արսեն Շահմազյանի գլխավորությամբ գեներալ Շիխլինսկու հրամանատարությամբ ադրբեջանական զորքերի եւ Հաճի Սամլուի քրդական հրոսակախմբերի դեմ նույն տարվա նոյեմբերի սկզբներին զանգեզուրցիների հաղթական կռիվները - Հ. Գ.):

Դրօն, լսելով Աշոտի տաւած տեղեկութիւնները, ոգեւորւած ասում է, որ պէտք է ստանձնած որոշ պարտականութիւնները փոխանցի ուրիշ մեկին եւ անցնի Զանգեզուր:

Աշոտը Դրոյի Զանգեզուր գնալը գտնում է անհրաժեշտ, աշխատելու այնտեղ Արսէն Շահմազեանի եւ Նժդեհի օգնութեամբ, սակայն նպատակահարմար չի գտնում Ս. Մ. Եօլչեանին ու գեներալ Ղազարովին Զանգեզուր ուղարկելը, որովհետեւ ոչ նրանք գիտեն ժողովրդին եւ ոչ էլ ժողովուրդն է նրանց ճանաչում»:[10]

Զանգեզուրցիների համար վերջապես գալիս է երկար սպասված ցանկալի պահը:

«Դեկտեմբերի 20-ին 1919 թ. Դրօն Երեւանից ժամանում է Գորիս Էքսպեդիցիոն զօրամասով, որի, համաձայն Դրոյի յայտարարութեան, գլխավոր նպատակն էր զէնքի ուժով վճռելու վերջնականապէս Արցախի հարցը»:[11]

Դրոյի զորամասի կազմում էին փոխգնդապետ Թարիվերդյանի գլխավորած գումարտակը, գնդապետ Կոռո Թարխանյանի հեծյալ ջոկատը եւ պարուշիկ Արզոնովի լեռնային հրանոթների մարտկոցը: Զորամասի շտաբի (սպայակույտ) պետն էր գնդապետ Միրիմանյանը: Էքսպեդիցիոն զորամասը, որի շարքերում կային ընդամենը

էջ 4

> *«Դեկտեմբերի 20-ին 1919 թ. Դրօն Երեւանից ժամանում է Գորիս Էքսպեդիցիոն զօրամասով, որի, համաձայն Դրոյի յայտարարութեան, գլխավոր նպատակն էր զէնքի ուժով վճռելու վերջնականապէս Արցախի հարցը»:*[11]

Առաջին շարքում, ձախից՝ չորրորդը Յապոնը



Դրաստամատ Կանայան

Զանգեզուրի վերջնական մաքրումը թուրք բնակչությունից.

ÑáõÝí ³ ñ 1920 Ã.

էջ 3

500-600 զինվորներ, պետք է հանդիսանար Զանգեզուրում կազմավորվող մարտական ուժերի միջուկը:[12]

Պիտի նկատել, որ Զանգեզուրի գրեթե բոլոր շրջաններն ունեին իրենց մարտական խմբերը, որոնք, ինչպես արդեն նշվել է, մարտական մեծ փորձառություն էին ձեռք բերել մահմեդական հրոսակախմբերի եւ Ադրբեջանի Հանրապետության կանոնավոր զորամասերի դեմ մղված բազմաթիվ կռիվներում: Դրոյի գլխավորած զորամասն այն հիմնական մարտական ուժն էր, որը պիտի միավորեր եւ առաջնորդեր Զանգեզուրի զինական խմբերին:

Այսուհանդերձ, թուրք զնվորականների ու գործակալների կողմից վաղորոք ըստ ամենայնի զինված ու կազմակերպված թուրք բնակ շրջանների մարտական ուժերի դիմադրությունը հաջողությամբ խորտակելու եւ գավառը թուրք բնակչությունից մաքրելու համար անհրաժեշտ էր Զանգեզուրում կենտրոնացնել զենք ու զինամթերքի բավարար պաշարներ, որոնք առաջին իսկ հնարավորության դեպքում պիտի տեղափոխվեին Արցախ:

Հաստատել հուսալի կապ, հաղորդակցության միջոցներ Զանգեզուրի ու Արցախի միջեւ, որպեսզի Ադրբեջանի հետ պատերազմական գործողություններ սկսվելու դեպքում հնարավոր լիներ այդ ամենն անխափան եւ անկորուստ տեղափոխել Արցախ:

Մինչ այդ ամենի իրագործումը, հարկավոր էր որոշակի քայլեր ձեռնարկել նաեւ Արցախի ինքնապաշտպանությունը կազմակերպելու համար: Իսկ այդ ընթացքում անգործության մատնված չէին նաեւ Արցախի գործիչները: Արցախում կազմվել էր Գաղտնի Ինքնապաշտպանական Մարմին, որը ՀՅԴ կենտրոնական կոմիտեի հետ միասին 1919 թ. հոկտեմբերի 23-ին գումարում է միացյալ ժողով, որը որոշում է *«...դիմել Հայաստանի կառավարութեան եւ խնդրել դրամական միջոցներ կազմակերպելու եւ լուրջ հիմքերի վրայ դնելու Հայկական Ղարաբաղի ինքնապաշտպանութեան գործը, այլեւ ՀՅԴ Բիւրոյից խնդրել, որ Ղարաբաղ ուղարկեն մի աւտարիտետ կուսակցական ընկեր, նմանապէս մի բարձրաստիճան հեղինակաւոր զինուորական՝ գործի յաջողութեան համար, որոնք տեղական ընկերների հետ համերաշխօրէն առաջ կը տանին Ղարաբաղի ինքնապաշտպանութեան պատասխանատու գործը...Այս դիմումի հիման վրայ Բիւրօն նշանակում է Արսէն Միքայէլեանին եւ գնդապետ Զաքար Մեսեանին»*:[13]

Հովակ Ստեփանյանի գնահատմամբ՝ «Դժբախտաբար թէ առաջինը եւ թէ երկրորդը կ. կ-ի ուզած հեղինակաւոր անձնաւորութիւնները չէին, թէպէտ երկուսն էլ մեր համակրելի ընկերներն էին»:[14]

ՀՅԴ բյուրոյի հանձնարարությամբ Արցախ գործուղված Արսեն Միքայելյանն ու գնդապետ Մեսյանը պիտի հաստատվեին ու գործեին գլխավորապես Խաչենի, ապա Վարանդայի շրջաններում, սակայն ինչ-ինչ պատճառով նրանք նախատեսվածից ավելի մնում են Գյուլիստանում եւ ժամանակին չեն մեկնում նախատեսված վայրերը:

ՀՅԴ Ապառաժի կենտր. կոմիտեի ու Ինքնապաշտպանության մարմնի անդամներն՝ անհանգստանալով նրանց բացակայությունից՝ դեկտեմբերի 24-ին թվագրված նամակում Դրոյին տեղեկացնում են, որ *«...Հայաստանի լիազօրները տեղ չեն հասել, եւ խնդրում են մինչեւ վերջիններիս տեղ հասնելը որոշ քանակութեամբ դրամ ուղարկել...»*:[15]

Ի պատասխան Արցախի գործիչների պահանջի՝ «Դրօն իր կողմից որոշ հրահանգով Ղարաբաղ է ուղարկում կազմակերպական նպատակներով՝ Սասունցի Մանուկին, Կ. Աթանեսեանին եւ ռոտմիստր Տեր-Մարտիրոսեանին, եւ զանազան թղթադրամներ 400000 ր.: Սոքա պէտք է աշխատեն Ղարաբաղի ինքնապաշտպանութեան մարմնի հետ միասին, մինչեւ որ Հայաստանի լիազօրների Ղարաբաղ գալը, որից յետոյ երեք աշխատակիցները կգործեին Հայաստանի լիազօրների տրամադրութեան տակ»:[16]

Ս. Վրացյանի պնդմամբ՝ Դրոյի կողմից Արցախ գործուղված գործիչները, տեղական ընկերների հետ միասին պիտի կազմակերպեին արցախահայության ինքնապաշտպանությունը, մինչեւ որ կստեղծվեին քաղաքական նպաստավոր պայմաններ, զենքի ուժով Արցախը վերջնականապես միացնելու Հայաստանին:[17]

Արցախի խնդիրը զենքի միջոցով լուծելու համար նախ եւ առաջ անհրաժեշտ էր որպեսզի անխափան գործեին Արցախը Զանգեզուրին կապող հաղորդակցության ուղիները: Արցախը Զանգեզուրից անջրպետող գլխավոր խոչընդոտը Գորիսից դեպի հարավ 10 վերստ (10, 67 կմ) հեռավորությամբ գտնվող Էյվազլար, Շուռնուխ, Մազրա, Նավլու շրջանի թրքությունն էր, որը սեպաձեւ մտնում եւ իրարից բաժանում էր Ղափանի ու բուն Զանգեզուրի ու Սիսիանի հայությանը:[18]

«Այս հարցը, – գրում է Ս. Վրացյանը, – *հերթական դառնալով, հայութեան շահերի տեսակէտից պահանջում էր իր լուծումը: Զանգեզուրի ընդհանուր կոմիսար Մելիք-Յոլչեանը ծանօթանալով վերոյիշեալ հարցի հետ, մի քանի անգամ ժողով է հրաւիրում՝մասնակցութեամբ զինուորական ուժերի հրամանատար Դրօի, Շրջանային խորհրդի անդամների ու զօրաւար Յ. Ղազարեանի»*:[19]

Զանգեզուրում տեղի ունեցած զինվորական խորհրդաժողովում քննարկվել է «1. Ղարաբաղի հարցը, 2. Շուռնուխի հարցը, 3. Օրդուբաթի հարցը:

Ի նկատի ունենալով Ադրբէջանի ագրեսիւ քաղաքականութիւնը եւ վերջինիցս բխող գործողութիւնները, որոնք էին՝ նոյեմբերի 3-8-ը Զաբուղի վրայով Զանգեզուրի վրայ յարձակելը (նկատի ունեն գեներալ Շիխլինսկու առաջնորդած բանակի հարձակումը - Հ. Գ.), նոյեմբերի 15-ի յարձակումը եւ նոյեմբերի 26-ին Նախիջեւանի կողմից Սիսիանի վրայ յարձակելը: Այս գործողութիւնները ուղղուած էին Ղարաբաղի եւ Զանգեզուրի դէմ»:[20]

Զանգեզուրի իշխանության եւ զինվորական խորհրդակցության մասնակիցները հստակ գիտեին, որ իրենց առջեւ դրված վերոհիշյալ երեք գլխաւոր հարցերի դրական լուծումից էր կախված Զանգեզուրի եւ Արցախի հետագա ճակատագիրն ու ապահովությունը:

Ծանոթանալով Զանգեզուրում տիրող իրավիճակին եւ խորհրդակցելով «Վարիչների խորհուրդ» մարմնի անդամների ու տեղի ռազմական ուժերի հրամանատարների հետ՝ Դրոն վճռում է առաջին հերթին մաքրել Զանգեզուրի հայության նկատմամբ թշնամաբար տրամադրված Էյվազլար, Շուռնուխ, Մազրա, Նավլու ու նրանց մերձակա գյուղերը թուրք բնակչությունից: Թուրքաբնակ այդ գյուղերը շատ լավ կազմակերպված էին ու զինված եւ մշտապես կապի մեջ գտնվելով Ադրբեջանի իշխանությունների հետ՝ պատրաստ էին նրա առաջին իսկ հրահանգի դեպքում հարձակվել հայկական գյուղերի վրա:[21]

Թուրքական վերոհիշյալ բնակավայրերը, ինչպես արդեն նշվել է, սեպաձեւ խրվելով Ղափանի եւ Գորիսի շրջանների արանքում, Զանգեզուրի տարածքը փաստորեն բաժանել էին երկու միմյանցից անջրպետված մասերի: Հարկավոր էր վերացնել Զանգեզուրի հյուսիսային ու հարավային շրջանների կապն ու հաղորդակցության ուղիներն արգելափակող պատնեշն ու ապահովել բնակչության անվտանգ երթեւեկությունը: Այդ գործողության կենսագործմամբ ոչ միայն Զանգեզուրը կմաքրվեր մահմեդական բնակչությունից ու անխափան կգործեին Ղափանի ու Գորիսի շրջանները միմյանց կապող հաղորդակցության ուղիները, այլեւ բացվում էր դեպի Արցախ ձգվող ճանապարհը եւ այնտեղ ռազմական գործողություններ ծավալելուց առաջ, կարելի է ասել, լուծվում էր թիկունքի անվտանգության հարցը:

Զանգեզուրի «Մաքրման» գործողությանը Դրոն մասնակից է դարձնում Դարալագյազի մարտական ուժերի հրամանատար Յապոնին, որին հանձնարարում է գլխավոր ճակատի՝ Գորիսի զինվորական շրջանի հրամանատարությունը:

Իր հուշերում անդրադառնալով Զանգեզուրը թուրք բնակչությունից մաքրելու Դրոյի մարտավարությանը՝ Յապոնը նշում է. *«...Դրոն կանչեց ինձ իր մոտ ու ասաց, որ Զանգեզուրի Ազգային Խորհրդի համաձայնութեամբ կայացուած որոշումով 1920-ի յունուարի սկզբներին պէտք է յարձակում լինի թրքական Շուրնուխի-Էյվազլար շրջանի վրայ՝ այդ շրջանի 28-ի չափ գիւղերին պարտադրելու համար, որ ընդունեն Զանգեզուրի հայկական իշխանութիւնը ու զինաթափ լինեն, քանի որ այդ շրջանը մտնում է հայկական Զանգեզուրի մէջ: Այլապէս ամբողջ բնակչութիւնը պէտք է հարկադրուի թողնել այդ շրջանը եւ հեռանալ:*

... Հաւանեցի Դրոյի ծրագիրը ու պատրաստակամութիւն յայտնեցի մասնակցելու արշաւանքին...».[22]

Հանրապետության զինվորական նախկին նախարար, գեներալ Հախվերդյանն իր հուշագրությունում համառոտակիորեն անդրադառնալով նաեւ Զանգեզուրին եւ Արցախին առնչվող խնդիրների մեկնաբանմանը՝ գրում է. *«Դրոյին առաջադրանք էր տրված առաջին հերթին մաքրել Զանգեզուրի հարավային եւ արեւելյան շրջաններն ու Ղափանը, ինչպես նաեւ Զանգեզուրի եւ Արցախի միջեւ ընկած գոտին թաթար բնակչությունից, որպեսզի ապահովվեր նրանց կապն ու փոխհամագործակցությունը»*.[23]

Մինչ հիմնական գործողություններ սկսելը՝ Դրոն անցնում է Ղափան, ճշտում Գարեգին Նժդեհի հրամանատարությամբ գործող զորախմբերի մարտական առաջադրանքը եւ տալով համապատասխան հրահանգներ՝ վերադառնում է Գորիս:

Դրոյի զորամասի եւ զանգեզուրյան մարտական խմբերի նախապատրաստական աշխատանքներն ու տեղաշարժերը, զուտ մարտավարական նկատառումով, կատարվել են խիստ քողարկված, հակառակորդի համար աննկատ: Որպեսզի հակառակորդին հնարավորություն չընձեռվեր տեղաշարժվելու, միմյանց օգնություն հասնելու հնարավորությունից, հայկական մարտական ուժերի հրամանատարությունը ծրագրում է թուրքաբնակ գյուղերի վրա հարձակումը ձեռնարկել միաժամանակ, սրընթաց եւ հակառակորդի համար անսպասելի:

«Գորիսում, – շարունակում է Յապոնը, – *որոշուեց ռազմական գործողութիւն սկսել յունուարի 6-ին (19) ՝ նախապէս թուրք գյուղերին հպատակութեան եւ զինաթափութեան հրաւէր ուղարկելով: Թուրք գիւղերին ուղղուած հրաւէր ուղարկուեց Էյվազլարի գիւղի կոմիսարի միջոցով, որին 3 օրից յետոյ պատասխանեցին մերժումով:*

– Ոչ միայն չենք ընդունում Գորիսի իշխանութիւնը, – ասել էին նրանք, – *այլեւ պատրաստում ենք գրաւելու Ադրբեջանին պատկանող ամբողջ հայկական Զանգեզուրը...»*.[24]

Գեներալ Հախվերդյանի վկայությամբ՝ *«... այդ բնակչությունը ադրբեջանական հրահանգիչների կողմից շատ լավ կազմակերպված էր եւ իրենից ներկայացնում էր որպես զինված զորամասեր, ապահովված նույնիսկ գնդացիրներով»*:[25]

Դրոյին եւ զանգեզուրյան մարտական ուժերի հրամանատարությանն այլընտրանք այլեւս չկար: Մերժողական պատասխան ստանալուց հետո մնում էր ապավինել զենքի ուժին:

Վարդան Գեւորգյանը, իր հեղինակած «Լեռնահայաստանի գոյամարտը (1919-1921)» գրքում ներկայացնելով այդ ժամանակահատվածում Զանգեզուրում ձեռնարկված գործողության մանրամասները, «Շուռնուխի արշաւանքը» ենթագլխում հայ մարտական ուժերի հաղթանակները վերագրում է առավելապես Նժդեհին ու նրա գլխավորած Ղափանի մարտախմբին:[26]

Հարգարժան պատմաբան Արամ Սիմոնյանն իր հեղինակած «Զանգեզուրի գոյամարտը» պատմագիտական աշխատությունում «Գարեգին Նժդեհի Շուռնուխյան ռազմական գործողությունը եւ նրա արձագանքները» հոդվածում նույնպես այդ գործողությունը իրականացնելու գործում առավելապես ընդգծում է Նժդեհի ու նրա գլխավորած Ղափանի մարտական ուժերի ներդրումը:[27]

«1920 թ. հունվարի 19-ից, – գրում է Ա. Սիմոնյանը, – *զանգեզուրցիները բուռն գրոհով մաքրեցին բուն Զանգեզուրի եւ Ղափանի միջեւ ընկած տարածությունը՝ Դոնդառլու-Շուռնուխ-Ասկալումի թուրքական շրջանը՝ մոտ 30 գյուղ: Շատ չանցած՝ զանգեզուրյան ուժերը նոր խոշոր հաղթանակ տարան՝ մարտ ամսին ջախջախեցին մուսավաթական բազմամարդ հրոսակախմբերը եւ գրավեցին Բարգյուշատ-Մուսուլմանլար-Ալեանշու-Ավդալար շրջանը՝ մոտ 120 գյուղերով:*

Թրքությունը թողեց եւ հեռացավ Ադրբեջանի խորքերը:

Այդ բոլոր գործողությունների ընթացքում վճռորոշ դեր խաղացին Նժդեհի զինված ուժերը»: [28]

Վ.Գեւորգյանի հավաստմամբ՝ Գ. Նժդեհը համամիտ չլինելով այդ արշավանքի ձեռնարկմանը՝ իր մտահոգությունն ու տեսակետն է ներկայացնում գեներալ Ղազարյանին:

«Այդ օրերում, – գրում է Վ. Գեւորգյանը, – *Նժդեհ Երեւանէն Գորիս ժամանած զօր. Ղազարովի կը ներկայացնէ Օրդուբադի դէմ ձեռնարկուելիք արշավանքին մարտագիրը: Իսկ զօր. Ղազարով կը հրաւիրէր Նժդեհը խորհրդակցութեան մը, որուն նպատակն էր Դրօի եւ զօրավարին կողմէ գործողութեան ռազմագիտօրէն վտանգաւոր ըլլալը:*

Այն պահուն, երբ հայկական Ղարաբաղի մէջ ապստամբական շարժումներ կը խմորուէին՝ Շուռնուխի արշաւանքը առիթ պիտի տար Ատրբեջանի մեծ ուժեր փութացնել թէ Ղարաբաղի եւ թէ Զանգեզուրի արեւելեան ճակատներու վրայ կռիւներու մասնակցող թուրքերուն: Շուռնուխի ուղղութեամբ զինուորական գործողութիւններ սկսիլ՝ կը նշանակէր բարդացնել Ղարբաղի դրութիւնը, ուր այդ օրերուն ոչ կանոնաւոր կազմակերպութիւն կար, ոչ ալ բաւարար ռազմամթերք: Կար եւ Գողթանի շրջանի վտանգուած պարագան...».[29]

Պիտի ասել, որ ՀՀ կառավարության որոշմամբ Զանգեզուրի զինվորական մասի ղեկավար նշանակված զօր. Ղազարովը (գեներալ Ղազարյան), ըստ հեղինակի պնդմամբ, Զանգեզուր է եկել ոչ թե «Այդ օրերում...», այլ 1919 թ. նոյեմբերի վերջերին, իսկ ձեռնարկվող մարտական գործողությունը, այն է՝ Զանգեզուրի տարածքը մահմեդական բնակչությունից մեկընդմիշտ մաքրելը ծրագրված էր ՀՀ կառավարության որոշմամբ ու այն անպայմանորեն պիտի կենսագործվեր:

Ա. Սիմոնյանը վերոհիշյալ հոդվածում մեջբերում է Վ. Գեւորգյանի «Զանգեզուրի հերոսամարտը 1919-1921» գրքում տեղ գտած արշավանքի նախօրեին Դրոյին հասցեագրած Նժդեհի գրությունը, որտեղ ասվում է. «Որպես հեղափոխական իմ բարոյական պարտքն եմ համարում վերջին անգամ նախազգուշացնելու, որ Շուռնուխի գործողությունները շատ ծանր հետեւանքներ պիտի ունենան Ղարաբաղի եւ Գողթանի համար:

Իհարկե...իմ տեսակետը տվյալ հարցերի մասին ինձ՝ որպես զինվորականի, իրավունք չի տալիս չկատարելու ինձ տրվելիք հրամանը: Եղեք համոզված, որ տրվելիք խնդիրները իմ ուժերի կողմից կը կատարվին ամենափայլուն կերպով»:[30]

Այո, հայկական կողմը պարտավոր էր անհրաժեշտ քայլեր ձեռնարկել ու ապահովել Գողթանի հայության անվտանգությունը, սակայն, դժբախտաբար, նույն տարվա դեկտեմբերի վերջերին Գողթանի, հատկապես Ագուլիսի հայություն մեծ մասի կոտորածն արդեն տեղի էր ունեցել:

Գողթան գավառակն իր աշխարհագրական դիրքով, իրոք, ռազմավարական նշանակություն ուներ: Գավառակն այդ ժամանակ ունեցել է զուտ հայաբնակ 20-25 գյուղեր, որոնք գտնվելով Թուրքիայի եւ Ադրբեջանի հատման տեղում, միաժամանակ Արեւիքի (Մեղրի) շրջանի հետ Ադրբեջանն անջրպետում էին Նախիջեւանից: Գողթանի գավառակի վերացումը նշանակում էր ուղիղ ճանապարհ բացել Բաքվի, Անկարայի եւ Պոլսի միջեւ: Ահա հենց դա է եղել պատճառը, որ թուրք-ազերը համառորեն ձգտում էին գրավել ու մեջտեղից վերացնել Գողթանը, սակայն «Շնորհիւ իրենց ճկուն բնաւորութեան, գողթնեցիք կարողացան պահել «Իսլամական կառավարութեան» իշխանութեան տակ»:[31]

Գողթանի գավառակում իրավիճակը փոխվում է, երբ հայկական զորքերը Դրոյի առաջնորդությամբ ու անգլիացիների միջամտությամբ 1919 թ. մայիսին գրավում են Նախիջեւանի: Գողթանը դառնում է Նախիջեւանի նահանգի երեք գավառներից մեկը՝ Ագուլիս կենտրոնով: Նահանգապետ է նշանակվում Գեւորգ Վարշամյանը, Գողթնի գավառապետ՝ Աշոտ Մելիք-Մուսյանը, իսկ միլպետ՝ Մովսես Գյուլնազարյանը: Սակայն

Նախիջեւանի նահանգում եւ, այդ թվում Գողթան գավառում տիրող խաղաղ կացությանը վիճակված չէր երկարատեւ կյանք ունենալու: Նահանգում դեռ նոր-նոր էր հաստատվել Գ. Վարշամյանի նահանգապետությունը, երբ նահանգի մահմեդականությունը, դիմելով զենքի, բռնազավթում է նահանգի իշխանությունը, իսկ հայկական փոքրաքանակ ուժերն անկարող լինելով դիմագրավել թուրքական ավելի քան 10.000 թվակազմ ունեցող զինուժի ճնշմանը, հարկադրված լքում են Նախիջեւանը:

Նահանգի հայ բնակչությունը հայտնվում է օրհասական իրավիճակում:

«Օգոստոսի 3-ին, Ա. Մելիք-Մուսեանն ու Մ. Գյուլնազարեանը Վերին Ագուլիսից Հայաստանի Խորհրդարանին, Հայաստանի կառավարութեան, Գորիսի, Ղափանի, Գենուազի պետական ներկայացուցիչներին, Ազգային խորհուրդներին եւ ի լուր համայն հայութեան ահազանգում են «Նախիջեւանն ընկաւ. շրջանի հայութեան բաւական խոշոր մասը սրի է քաշուած, Արաքսի մէջ նկատուած են մեծ թով դիակներ, ըստ Թուրքական լուրերի, կոտորածից ազատուած հայութեան մնացորդները նահանջել են Դէպի Դարալագեազ:

...Յուլ. 25-ից՝ Գողթնում ուժեղ կռիւներ են տեղի ունեցել: Վերին գիւղերում (Փոռակա-Բիստ) յաջողութիւններն առ այժմ մերոնց կողմն են:

...Թուրքերը խոշոր պատրաստութիւններ են տեսնում մաքրելու Գողթնը հայութիւնից...

...Փրկւած է Գողթնը, եթէ մօտ օրերում 400 սրտացաւ զինւոր մեզ օգնութեան հասնի»»:[32]

Թուրքերի պաշարման օղակում են հայտնվում ոչ միայն Գողթանի գյուղերը, այլեւ Վերին եւ Ներքին Ագուլիսները:

Հայաստանի Հանրապետությունը թեեւ այդ օրերին մահմեդական բնակչության ապստամբության պատճառով նույնպես գտնվում էր ոչ բարվոք վիճակում եւ ինքը կարիք ուներ դրսի օգնության, այնուամենայնիվ, հասցնում է նյութական միջոցներ ու պարենի պաշարներ ուղարկել Զանգեզուր՝ Գարեգին Նժդեհին, եւ նրան հանձնարարում կազմակերպել Գողթանին օգնություն հասցնելու հույժ կարեւոր գործը: Միաժամանակ, որպես զինական օգնություն ՀՀ կառավարության հանձնարարությամբ Գողթան է ուղեւորվում Ղազար Քոչարյանի գլխավորած մարտական խումբը, որը սեպտեմբերին 2-ին դուրս է գալիս Երեւանից եւ հոկտեմբերի 2-ին հասնում Գողթան: ՀՀ կառավարության հանձնարարությամբ՝ Գ. Նժդեհը եւ Ղ. Քոչարյանը գավառի պաշտպանության համար պիտի կազմեին զորամաս ու ուղարկեին Գողթան[33]:

Ըստ Ս. Վրացյանի՝ *«Հայկական զօրքերի ժամանումը բարձրացրեց ժողովրդի տրամադրութիւնը: Ղազարը Մովսէս Գիլնազարեանի եւ տեղական ուժերի գործակցութեամբ կազմակերպեց շրջանի ինքնապաշտպանութիւնը-7-8000 կռուողներ, 2 թնդանօթ, 6 գնդացիր,- եւ այնուհետեւ Գողթնը ո՛չ միայն դիմացաւ թրքական յարձակումներին, այլեւ ինքն էլ դարձաւ նախաձեռնարկ:*

...Տեղի ունեցան տաք կռիւներ. թշնամին պարտուած՝ դիմեց խուճապային փախուստի՝ հայերի ձեռքը թողնելով առատ աւար, գերիներ ու մի դրօշակ» [35]:

Այսուհանդերձ, հայ մարտական ուժերն ինչպես հարկն է չեն կարողացել կազմակերպել Վերին Ագուլիսի, Ներքին Ագուլիսի ինքնապաշտպանությունը եւ թուրքերին հաջողվել է վրեժխնդիր լինել Վերին Ագուլիսից:

Դեկտեմբերի 18-ին թուրք հրոսակախմբերը հարձակվում են նախ Ներքին Ագուլիսի վրա եւ սրի են քաշում քաղաքի բնակչության մեծ մասին: Կոտորածից փրկվածները փախչում են Վերին Ագուլիս:

Դժբախտաբար, Վերին Ագուլիսի բնակչությունը փոխանակ քայլեր ձեռնարկեր եւ միջոցներ գտներ կազմակերպելու ինքնապաշտպանությունը, հույս է ունեցել կաշառքի ու սիրաշահելու միջոցով արժանանալ թուրք առաջնորդների բարեկամությանը եւ նրանց օգնությամբ փրկվելու կոտորածից:

Ժամանակը միանշանակ ցույց տվեց, որ իզուր էին ագուլիսցիների փայփայած հույսերը: Թուրքական կողմը երկար սպասել չի տալիս: Ներքին Ագուլիսի անկումից հաշված օրեր անց՝ դեկտեմբերի 28-ին, թուրք հրոսակախմբերը հենց ագուլիսցիների կողմից կաշառված ու նրանց անվտանգությունն ապահովելու բազմաթիւ խոստումներ շռայլած թուրք երեւելիների առաջնորդությամբ ներխուժում են անպաշտպան Վերին Ագուլիս ու անխնա կոտորում քաղաքի բնակչությանը, ապա թալանում ու ավերակույտերի են վերածում անգամ միջազգային ասպարեզում իր հարստությամբ հանրահայտ քաղաքը:

«Ագուլիսի կոտորածը, – գրում է Ս. Վրացյանը, – մեծ հարւած էր հայ ժողովրդի համար, եւ հասկանալի է այն յուզումն ու ցասումը, որ առաջ բերեց հայաբնակ բոլոր շրջաններում: Լուրը Երեւան հասաւ դեկ. 29-ին, Գորիսից: Երկու օր յետոյ, դեկ. 31-ին, Ինդեւրոպական հեռագրագծով հեռագիր ստացւեց Թաւրիզից, թէ՝ «Քարտէսի վրա Ագուլիսն այլեւս գոյութիւն չունի. Ներսէս եպ.»:

Յուն. 4-ին Մելիք-Թանգեան եպ-ը հաղորդեց, թէ՝ «Ամենքը կոտորւած են: Մանրամասնութիւնները թոյլ չեն տալիս»»:[36]

Հարց է ծագում՝ եթե Գողթանի եւ մասնավորապես Վերին եւ Ներքին Ագուլիսների կոտորածն արդեն տեղի էր ունեցել, ապա ի՞նչ իմաստ եւ նշանակություն ուներ Նժդեհի դիմումը, որով նա առաջարկում է Զանգեզուրի զինվորական հրամանատարությանն ու Դրոյին՝ չձեռնարկել Շուռնուխի գործողությունը՝ վկայակոչելով Արցախն ու Գողթանը:

Վ. Գեւորգյանի հեղինակած «Լեռնահայաստանի հերոսամարտը 1919-1921» գրքում Զանգեզուրում, մասնավորապես Գեղվաձորի շրջանում, ճիշտ եւ ճիշտ այդ նույն օրերին տեղի ունեցած կռիվներում այնպիսի գույներով է ներկայացնում Զանգեզուրյան մարտական ուժերի նվաճած հաղթանակներն ու Գ. Նժդեհի գործունեությունը, որը կարելի է ասել, ավելի քան տարօրինակ է ու անհասկանալի:

Համաձայն Վ. Գեւորգյանի՝ դեկտեմբերին Գեղվաձորի հաղթության կապակցությամբ Զանգեզուրի Ազգային Խորհրդի անդամ Սմբատ Մելիք-Ստեփանյանը (Սմբատ Բեկ) Գարեգին Նժդեհին է հղում հետեւյալ շնորհակալական հեռագիրը(դեկտեմբերի 8).

«Սիրելի Գարեգին,

Կատարածներիդ անվերջ շնորհակալութիւն: Կուզենայի այս պատմական օրերին գեղեցիկ յաղթական շարքերը այստեղ ընդունել եւ ապա վերադառնալ կենտրոն»: [37]

Ուշագրավ է, որ Սմբատ Բեկի այդ շնորհակալագիրը թվագրված է դեկտեմբերի 8-ին, իսկ Վ. Գեորգյանը ներկայացնելով Գ. Նժդեհի գլխավորած մարտական ուժերի նվաճած Գեղվաձորի հաղթանակը՝ միամտաբար նշում է, որ դեկտեմբերի 10-ին «...շրջանի ամբողջ հայութիւնը կը տօնէր զօրքին տարած փառաւոր յաղթանակը»:[38]

Ավելին, 25 վաշտապետերի ստորագրությամբ Գ. Նժդեհին հասցեագրած նամակում (դեկտեմբերի 15) վաշտապետերը նշում են. «Մենք Ղափանի զինվորութիւնն ու վաշտապետներս, ի նկատի ունենալով այն, որ Դուք լինելով Ղափանի ռազմական ուժերի հրամանատար, ոչ՛ թէ միայն զերծ պահեցիք մեր երկիրի սահմանները թշնամի ոտնձգութիւններից, այլեւ մաքրեցիք անառիկ Գեղուաձորը, որը մահու չափ վտանգ էր սպառնում մեր Հայրենիքին: Որոշեցինք երախտագիտութեամբ նուիրել Ձեզ, սիրելի հրամանատար սուր հետեւյալ մակագրութեամբ, ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀԻՆ, որին Ղափանն անուանեց երկրորդ Դավիթ Բէկ, իսկ թշնամին՝ Աժդահա Փաշա»:[39]

Օրինակ հարց է ծագում, իսկ ինչպիսի՞ մարտավարությամբ են առաջնորդվել եւ ինչպիսի՞ վճռական քայլեր են ձեռնարկել Զանգեզուրի Ազգային Խորհուրդը, որի անդամն էր Զանգեզուրյան մարտական ուժերի ու նրանց հրամանատարի տոնած «յաղթական շարքերը» շնորհավորող Սմբատ Բեկը, Ղափանի կողմից երկրորդ Դավիթ Բեկ, իսկ թշնամու՝ Աժդահա Փաշա անունը վաստակած Գարեգին Նժդեհը, երբ նույն օրերին նրան Աժդահա Փաշա անունը շնորհող թշնամին կործանում էր Վերին ու Ներքին Ագուլիսներն ու սրի քաշում Գողթանի հազարավոր հայ բնակիչների:

Գողթանի հայության անվտանգության ապահովումը, որը չափազանց անհրաժեշտ էր, պարտավոր էին իրականացնել ՀՀ կառավարությունը, Զանգեզուրի քաղաքական ու զինվորական իշխանությունները՝ ի դեմս Մելիք-Յոլչյանի եւ գեներալ Ղազարյանի եւ անձամբ նաեւ Գարեգին Նժդեհը, որպես Կապարգողթի մարտական ուժերի հրամանատար: Չպետք է մոռանալ, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը հենց Գարեգին Նժդեհին ու նրան օգնության ուղարկած Ղազար Քոչարյանին էր հանձնարարել կազմակերպելու Գողթանի գավառակի, այդ թվում Վերին ու Ներքին Ագուլիսների ինքնապաշտպանությունը:

Իսկ ինչ վերաբերում է Արցախին, ապա որեւէ կասկած լինել չէր կարող, որ եթե Զանգեզուրը չմաքրվեր թուրք զինված հրոսակախմբերից, ապա դեպի Արցախ ձգվող հաղորդակցության ուղիների փակված լինելու, չգործելու պարագայում, Հայաստանի Հանրապետության համար չափազանց դժվարին կլիներ անհրաժեշտ օգնության, առաջին հերթին մարտական ուժեր, զենք ու զինամթերք ժամանակին տեղափոխել Արցախ:

Անտարակույս, Զանգեզուրը մահմեդական բնակչությունից «մաքրելու» ՀՀ կառավարության որդեգրած ռազմավարությունը պատճառաբանված էր ու անհրաժեշտ, մանավանդ երբ արդեն ստացվել էր ՀՅԴ Ապառաժի կենտրոնական կոմիտեի եւ Արցախի Գաղտնի ինքնապաշտպանական մարմնի 1919 թ. հոկտեմբերի 23-ին կայացած միացյալ ժողովի դիմումը, որտեղ ասվում է. «... դիմել Հայաստանի կառավարութեանը, խնդրել դրամական եւ ռազմական միջոցներ՝ կազմակերպելու եւ լուրջ հիմքերի վրայ դնելու հայկական Ղարաբաղի ինքնապաշտպանութեան գործը...»:[40]

Բնավ պատահական չէ, որ Զանգեզուրում, ապա նաեւ Արցախում ծավալվող գործողությունների ղեկավարումը հանձնարարվել է ՀՀ-ում եւ, հատկապես, զինվորականության շրջանում անառարկելի հեղինակություն ունեցող Դրոյին:

Հարկ է ընդգծել, որ Զանգեզուրը մահմեդական բնակչությունից մաքրելու գործողությունների ուսումնասիրությունն աներկբա մատնանշում է, որ Շուռնուխյան ռազմական գործողությունը, այն է՝ Զանգեզուրը թուրք բնակչությունից մաքրելու ՀՀ կառավարության որոշմամբ իրականացրած գործողությունը Գ. Նժդեհին վերագրած գնահատականն այնքան էլ չի համապատասխանում իրականությանն ու չափազանցված է: Ճիշտ է, Գ. Նժդեհի գլխավորած Ղափանի մարտական ուժերն իրենց անգնահատելի ներդրումն են ունեցել գավառը թուրքերից մաքրելու չափազանց կարեւոր գործողության իրականացմանը, սակայն գործել են ռազմաճակատի մեկ այլ հատվածում:

Զանգեզուրի «Մաքրման» գործողությանը, ինչպես արդեն նշվել է, Դրոն մասնակից է դարձնում իր մարտական զինակից, Դարալագյազի մարտական ուժերի հրամանատար Յապոնին (Հովհաննես Պարոնյան), որը որպես հեծյալ վաշտի հրամանատար մասնակցել էր նրա գլխավորած 2-րդ կամավորական զորախմբի մղած բոլոր մարտերին: Քանի որ Զանգեզուրի երեք զինվորական շրջաններից՝ կենտրոնականի, այսինքն բուն Զանգեզուրի (Գորիսն իր շրջակա գյուղերով) մարտական ուժերի հրամանատարը մինչ այդ դեռեւս նշանակված չէր, Դրոն հենց Յապոնին է վստահում Շուռնուխի ճակատի հրամանատարությունը:

Այդ նույն գործողության մասնակից Արտեմ Խանզատյանի հավաստմամբ՝ «Գարեգին Նժդեհի առաջնորդած ղափանցիների մարտախմբերին հանձնարարվում է. հարձակումը սկսել Եղվարդ գյուղի տարածքից եւ շրջապատման մեջ վերցնել ու «մաքրել» մինչեւ Զեյվա գյուղի անտառապատ սարերը ընկած թուրքական բնակավայրերը»:[41]

Արտեմ Խանզադյանի վկայությամբ՝ Յապոնի եւ տաթեւացի Վարդանի գլխավորած մարտախմբերին է վստահվում Զանգեզուրի ամենադժվարին ու պատասխանատու տեղամասի՝ թուրքական ամենախիտ բնակչություն ունեցող բնակավայրերի (Տանձավեր, Շուռնուխ, Մազրա, Նավլու ու նրանց հարակից գյուղերի) վրա հարձակվելու եւ այդ գյուղերը թուրք բնակչությունից իսպառ մաքրելու առաջադրանքը:[42]

Արտեմ Խանզատյանի վկայությունը հավաստում է նաեւ Յապոնը:

Իր հուշերում անդրադառնալով Զանգեզուրը թուրք բնակչությունից մաքրելու Դրոյի մարտավարությանը՝ Յապոնը նշում է.

«Նա որոշեց ինձ յանձնել ռազմական գործողութեան դաշտի ամենից պատասխանատու ու դժուարին ճակատը՝ Շուրնուխի կենտրոնական գիւղի վրայ քայլող Տանձաւէրի հովիտից առաջացող ճակատը...».[43]

Այդ նույն իրողությունն անուղղակիորեն հաստատում է նաեւ Գ. Նժդեհը: Հարձակման նախօրեին՝ հունվարի 17-ին, իր հրամանատարությամբ գործող զինավաշտերին ուղղված ուղերձում Նժդեհը ներկայացնում է ձեռնարկվող հարձակման նպատակը ու համապատասխան խոսքերով ոգեշնչելով մարտիկներին՝ նշում է նաեւ իր գլխավորած մարտական ուժերի հարձակման ուղղությունը՝ «..իմ եօթն անգամ սիրած եւ քաջ ղափանցիներ, յառաջ դէպի այդ բարձունքները, դէպ Քեափազ, Ային-Տաղ, դէպ Հարթիզ»:[44]

Ճիշտ է, նրա մատնանշած վայրերից Քեափազն ու Ային-Տաղը ընկած են Ղափան-Գորիս խճուղու մերձակայքում, բայց դրանցից եւ ոչ մեկը չի գտնվում ռազմաճակատի գլխավոր՝ Տանձավեր- Էյվազլար- Շուռնուխ-Մազրա-Նավլու ուղղությունում: Իսկ Հարթիզը գտնվում է Ղափանի շրջանի Եղվարդ գյուղի մերձակայքում:

Զանգեզուրի մարտական ուժերը, համաձայն այդ կռիվների մասնակից Արտեմ Խանզադյանի (Զանգեզուրցի) վկայության, հարձակումը պիտի ձեռնարկեին հետեւյալ մարտավարությամբ. Յապոնի եւ տաթեւացի Վարդանի գլխավորած մարտախմբերը «...Տանձաւեր բէկերի գիւղերը քարուքանդ անելէ ետք Շուռնուխ գիւղի վրայովը անցնիլ եւ արշաւանք կատարել Նալու մեծ գիւղի վրայ, ուր թուրքերը կանոնաւոր ուժեր էին կենտրոնացրել»:[45]

Նժդեհի առաջնորդած ղափանցիների մարտախմբերին, ինչպես արդեն նշվել է, հանձնարարվում է հարձակումը սկսել Եղվարդ գյուղի տարածքից եւ շրջապատման մեջ վերցնել ու «մաքրել» մինչեւ Զեյվա գյուղի անտառապատ սարերը ընկած թուրքական բնակավայրերը: Գնդապետ Ամիրխանյանի զորախումբի մարտիկները պիտի գերիշխող դիրքեր գրավեին Խնձորեսկից մինչեւ Հագարու գետն ընկած բարձունքների վրա եւ թույլ չտային, որպեսզի Մաղավուզի ու Մազմազակի թուրք ու քուրդ հրոսակախմբերն օգնության հասնեին Բարգուշատի թրքությանը:

«Արտեմ Խանզատեանին եւ Եապոնացուն (նկատի ունի Սաքո-Յապոնին-Համբարձում Սարգիսջանյան -Հ. Գ.), – շարունակում է Ա. Խանզադյանը, – *հրահանգուած էր, իրենց խմբերովը Կէօրուա հանդի բարձրութիւններիցը Մաղանջուղ գիւղի վրայովը իջնել, կտրել Բարգիշատի ձորերի բերանին կառուցած Լալազարենց մեծ կամուրջը, այնտեղից անցնել եւ յարձակումն սկսել, վարդ ու ծաղիկներով լեցուն, սոխակների հայրենիքը համարվող Դոնդարլու Դամիրչիլար գիւղաքաղաքի վրայ»*:[46]

Համաձայն վաղօրոք մշակած մարտավարության, զանգեզուրյան մարտական ուժերը թուրքական բնակավայրերի վրա հարձակումը պիտի ձեռնարկեին միաժամանակ՝ հունվարի 6-ի (19) առավոտյան: Գործողության առաջին փուլում ծրագրված էր ընդամենը երկու օրում՝ հունվարի 6-ին եւ 7-ին մահմեդական բնակչությունից մաքրել Շուռնուխ, Էյվազլար , Մազրան եւ Նավլու գյուղերն իրենց շրջակա բնակավայրերով, ապա զարգացնելով հարձակումը՝ պիտի հասնեին մինչեւ Հագարու գետը:

Հունվարի 6-ին(19), առավոտյան Դրոն իր զորամասով դուրս է գալիս Գորիսից, ապա Քարահունջ տանող ճանապարհով անցնում Բարգուշատի ձորերով եւ շարժվում դեպի Էյվազլար: Որպեսզի թուրքերին զրկեր լեռների ամրություններում պաշտպանվելու հնարավորությունից, հրամայում է թնդանոթներից կրակ տեղալ թուրքաբնակ գյուղերի վրա:

«Տեղատարափ կրակոցներ էն, – պատմում է Արտեմ Խանզադյանը, – *թուրք ժողովուրդը անակնկալի է գալիս: Այնքան անակնկալ է լինում յարձակումը, որ թուրքերը ժամանակ չունենալով որեւէ ապրանք վերցնելու, թողնում են տուն եւ տեղը եւ փախչում պատսպարուելու, գիւղերի շրջաններումը ընկած Ուզուն Մեշու (երկար Անտառ) անտառները»*:[47]

Դրոյի զորամասի հարձակումը եւ թնդանոթներից արձակած կրակոցներն ազդարարում են հարձակման սկիզբը: Զանգեզուրյան մարտական ուժերը, համաձայն մշակած մարտավարության, միաժամանակ սկսում են հարձակումը եւ գրոհների բոլոր ուղղություններում նրանց ձեռնարկած հարձակումն ընթանում է մեծ հաջողությամբ: Էյվազլար գյուղը գրավելուց հետո, Դրոյի առաջնորդած զորախմբերը մեկը մյուսի հետեւից մաքրում են Էյվազլար գյուղի մերձակայքում գտնվող մահմեդական մյուս գյուղերը: Նույն հաջողությամբ էին ընթանում նաեւ մյուս ուղղություններում հարձակվող Զանգեզուրյան

էջ 6

Վերապատրաստման դասընթացներ հանրակրթական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք ստանալ ցանկացողների համար

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության երաշխավորությամբ (ՀՀ ԿԳՄՍ նախարարի 15.11.2019թ., հմ. 1041-Ա/2 հրաման) «Գորիսի պետական համալսարան» ՊՈԱԿ-ը կազմակերպում է վերապատրաստման դասընթաց հանրակրթական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք (հավաստագիր) ստանալ ցանկացողների համար:

Դասընթացը կկազմակերպվի Գորիսի պետական համալսարանում (ք. Գորիս, Ավանգարդ 2, հեռ.՝ (098)19-67-07, (077/099)33-76-90):

Վերապատրաստման դասընթացին կարող է մասնակցել այն անձը, ով ունի բարձրագույն կրթություն (բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս), վերջին տասը տարվա ընթացքում մանկավարժական, գիտամանկավարժական աշխատանքի կամ կրթության կառավարման ոլորտի առնվազն յոթ տարվա ընդհանուր աշխատանքային ստաժ:

Վերապատրաստմանը մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել.
1) դիմում՝ Գորիսի պետական համալսարանի ռեկտորի անունով (Ձեւ-1, լրացվում է տեղում),
2) 3x4 չափսի երկու լուսանկար,
3) բարձրագույն կրթության դիպլոմի պատճենը,
4) աշխատանքային գրքույկի պատճենը կամ քաղվածքը կամ վերջին տասը տարվա ընթացքում մանկավարժական, գիտամանկավարժական աշխատանքի կամ կրթության կառավարման ոլորտի առնվազն յոթ տարվա ընդհանուր աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանքը,
5) անձնագրի պատճենը,
6) մասնագիտական գիտելիքներն ու գործնական կարողությունները հավաստող այլ փաստաթղթեր (գիտական աշխատություններ, հրապարակումներ կամ դրանց ցանկը),
7) Գորիսի պետական համալսարանի 900288000012 հաշվեհամարին փոխանցված գումարի անդորրագիրը:

Փաստաթղթերի պատճենները ներկայացվում են բնօրինակների հետ միասին: Պատճենների իսկությունը ստուգելուց եւ սքանավորելուց հետո բնօրինակները վերադարձվում են:

Վերապատրաստման դասընթացի արժեքը 80000 (ութսուն հազար) դրամ է, ներառյալ մասնակիցներին տրամադրվող բաշխիչ նյութերը եւ սուրճի ընդմիջումները: Կկազմակերպվի նաեւ Էլեկտրոնային թեստավորում:

Դասընթացը կիրականացվի մոդուլային-կրեդիտային համակարգով՝ 110 ժամ ծանրաբեռնվածությամբ, որը կներառի վերապատրաստման բովանդակության պարտադիր՝ իրավական, կառավարչական, մանկավարժական, հոգեբանական գիտելիքների, ինչպես նաեւ՝ ուսուցման մեթոդաբանության եւ գործնական կարողությունների ձեւավորմանն ու ամրապնդմանն ուղղված բաղադրիչները, եւ կամ ընտրական դասընթացների առարկայախումբ (առաջարկվում է կամ ընտրական երկու մոդուլ՝ յուրքանչյուրը 15 ժամ ծանրաբեռնվածությամբ, որոնցից առանց լրացուցիչ վճարման դասընթացի մասնակիցը կարող է ընտրել մեկը):

Պարտադիր դասընթացները կներառեն հինգ մոդուլներ՝ երեք կրեդիտ (95 ժամ) ուսումնական բեռնվածությամբ.
1) Հանրակրթության բնագավառի օրենսդրություն,
2) Իրավունքի հիմունքներ,
3) Գնումների գործընթացի կազմակերպում,
4) Կիրառական հաշվապահություն,
5) Կիրառական մանկավարժություն եւ հոգեբանություն:

Կամ ընտրական դասընթացներից առաջարկվող մոդուլներ.
1) Տեքստային եւ գործարար փաստաթղթերի մշակման տեխնոլոգիա,
2) Օտար լեզու հատուկ նպատակներով:

Դասընթացը կվարեն Գորիսի պետական համալսարանի փորձառու աշխատակիցներ, հրավիրված այլ մասնագետներ:

Դիմումներն ընդունվում են 2019 թվականի նոյեմբերի 21-ից մինչեւ դեկտեմբերի 6-ը ներառյալ՝ Գորիսի պետական համալսարանում (Աշխատակազմի կառավարման բաժին, հեռ.՝ (098)19-67-07, (077/099)33-76-90 ամեն օր (բացի շաբաթ եւ կիրակի օրերից)՝ ժամը 9.00-ից 16.00-ն: Դասընթացը կկազմակերպվի դեկտեմբերի 11-ից մինչեւ դեկտեմբերի 27-ը ներառյալ՝ 6 օրյա շաբաթական ծանրաբեռնվածությամբ: Ունկնդիրների ցանկությամբ դասընթացի կազմակերպման ժամանակացույցը կարող է համաձայնեցվել:

Լրացուցիչ տեղեկություններ կարելի է ստանալ.
Բջջ.՝ (098)19-67-07, (095)29-01-18, (077/099)33-76-90
Կայք՝ www.gorsu.am
E-mail՝ gorissu@mail.ru
Fb՝ www.facebook.com/ԳՊՀ-Վերապատրաստումներ-Training-Courses
Հասցե՝ ՀՀ, ք. Գորիս, Ավանգարդ 2 (Գորիսի պետական համալսարան, 1-ին մասնաշենք, 2-րդ հարկ, Աշխատակազմի կառավարման բաժին):

«ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊՈԱԿ

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԱՐԺԱՆԻ

Մեր հոգսաշատ կյանքում, երբ հոգսերն ու դժվարությունները երբեմն դառնում են անլուծելի, առօրեական տարբեր խնդիրների կողքին անզոր ենք դառնում, եւ այս ամենի հետ էլ ճակատագիրն է դաժան փորձության ենթարկում՝ մի տեսակ թվում է, թե սպառվում ես, վերջանում, հեռանում, ընկնում, անհետանում... Բայց կյանքը քաղցր է, ու եթե լավ արարքներ ու մարդիկ են հանդիպում ճանապարհիդ՝ հոգսաշատ կյանքն ու վրա հասած փորձությունը դառնում են հաղթահարելի, ուժեղանում ես, դառնում լավատես ու շատանում է ապրելուդ ցանկությունը:

Ես առողջական խնդիրներ ունեմ, գտնվում եմ բժիշկների հսկողության տակ: Կյանքիս այս դժվար հատվածը ստիպված եմ ինքս հաղթահարել, բայց ինչ լավ է, երբ կողքիս կան հոգատար բժիշկներ, ովքեր իրենց սրտացավ աշխատանքով թեթեւացնում են վիճակս, իրենց վերաբերմունքով հուսադրում ինձ՝ որ այս առողջական խնդիրս դեռեւս դատավճիռ չէ, կյանքը շարունակվում է, եւ ամեն բան կկարգավորվի:

Ես այս ամենը գրում եմ՝ շնորհակալություն հայտնելու համար «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի Հեմոդիալիզի բաժանմունքի վարիչ Ռիտա Մկրտչյանին, ավագ բուժքույր Սիրանուշ Գեւորգյանին, բուժքույրեր Նաիրա Պողոսյանին եւ Անի Կարապետյանին, մայրապետ Լուսինե Գեւորգյանին եւ ինժեներ-տեխնիկ Պավել Հախվերդյանին: Այս բանիմաց ու հոգատար բուժանձնակազմը՝ բժիշկ Ռիտա Մկրտչյանի գլխավորությամբ, արդեն 2 ամսից ավելի է՝ օգնում է ինձ, բժշկական միջամտություններից բացի՝ կապված հեմոդիալիզի ընդունման գործընթացի հետ, այս դժվար օրերին ամեն պահի կողքիս են եւ ամեն ինչ անում են թեթեւացնելու համար հիվանդների վիճակը:

Շնորհակալ եմ ձեզնից, «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի Հեմոդիալիզի բաժանմունքի անձնակազմ՝ ձեր պատասխանատու աշխատանքը նվիրվածությամբ կատարելու եւ պացիենտների կյանքի որակի բարելավման համար ձեր կողմից հնարավոր ամեն ինչ անելու համար:

ՍՄԵԼԱ ԱԴԱՄՅԱՆ, ԿԱՊԱՆ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿՉՈՒՀԻ

Զանգեզուրի վերջնական մաքրումը թուրք բնակչությունից.

ÑáõÝí³ñ 1920 Ã.

էջ 5

մարտախմբերի գործողությունները: Յապոնի եւ տաթեւացի Վարդանի գլխավորած զինվորական ուժերը Տանձավեր գյուղը մաքրելուց ու քարուքանդ անելուց եւ Մարքազի բարձունքը գրավելուց հետո, հարձակվում են թուրքերի գլխավոր հենակետի՝ Շուռնուխի վրա, ուր կենտրոնացել էին մեծ թվով թուրքական զինված հրոսակախմբեր:

Իր հուշերում ներկայացնելով այդ պահը՝ Յապոնը գրում է. «...Հրաշալի է զանգեզուրցու հետ կռուի գնալը: Էդ խօմ կռիւ չէ, այլ քէֆ, հերոսական մրցութիւն՝ դժուարագոյն դիրքը գրաւելու, շարքում առաջինը լինելու համար...

Լուսաբացի հետ Մարքազը մեր ձեռքումն էր:

...Այստեղից մեր թափը կրկնապատկած՝ խփեցինք ուղիղ Շուրնուխի վրայ: Թրքական այդ կենտրոնական գիւղը իր բազմաթիւ կռուողներով ու անառիկ դիրքերով հազիւ կարողացաւ մէկ ժամ դիմանալ: Առաւ ու փախաւ՝ հետը քաշ տալով շուրջն ընկած բոլոր գիւղերը...

Կէս օր չեղած, մաքրեցինք իմ զօրամասին յանձնուած ճակատի վրայ ընկած Տանձաւէր, Մաճ, Նավլու, Քոմիրլու, Շուրնուխի, Մազրա գիւղերը՝ իրենց մօտիկ 3 ուրիշ գիւղերով, եւ Մարքազի բարձունքը»:[48]

Գերազանց կատարելով առաջադրանքը եւ համառ կռիվներից հետո ամբողջովին «մաքրելով» վերոհիշյալ բնակավայրերը, Յապոնի գլխավորած զորախումբը շարժվում է Նավլու եւ միանում նույն ոգեւորությամբ մարտնչող Սաքո Յապոնի (Համբարձում Սարգիսջանյան) եւ Արտեմ Խանզադյանի գլխավորած մարտախմբերին: Համատեղ ուժերով զարգացնելով հարձակումը՝ Զանգեզուրի մարտական ուժերը գրավում եւ ամբողջովին կրակի են մատնում թուրքաբնակ գյուղը:

Միաժամանակ, իրեն հանձնարարված Եղվարդից մինչեւ Ջեյվա ձգվող տեղամասը թուրք բնակչությունից մաքրելուց հետո, Նավլու գյուղ է հասնում նաեւ Գարեգին Նժդեհի գլխավորած Ղափանի զորախումբը:

Արտեմ Խանզատյանի վկայությամբ՝ հաջորդ օրը «Նժդեհ ղափանցի կտրիճների գլուխը անցած առաւօտեան եկաւ կրակի բաժին դարձած Նալու գիւղը»:[49]

Եզրափակելով Զանգեզուրը թուրք բնակչությունից «մաքրելու» նպատակով ձեռնարկած գործողության նկարագրությունը, Յապոնը նշում է. «Մազրայի գրավումով մենք լուծեցինք մեզ յանձնած ռազմական խնդիրը եւ շրջան կազմելով Էյվազլարի շրջանում՝ կախուեցինք Որոտանի գլխին, ուր հանդիպեցի Գորիսից առաջացող մեր ոյժերին: Դրօն դեռ հեռուից ողջունեց մեզ եւ մօտենալով՝ մենք գրկախառնուեցինք: Այդ օրը ամբողջ շրջանը, որ նախապէս ծրագրած էինք, գրաւեցինք»:[50]

Դրոն Զանգեզուրում Գարեգին Նժդեհի, Հովհաննես եւ Սաքո Յապոնների, Արտեմ Խանզադյանի եւ մյուս հրամանատարների ու քաջակորով զանգեզուրցիների համագործակցությամբ ընդամենը երկու օրվա ընթացքում հրաշալիորեն է լուծում Զանգեզուրը մինչեւ Հագարու գետը թուրքերից մաքրելու անգնահատելի գործը:

Պիտի ընդգծել, որ հայ մարտական ուժերի ձեռնարկած գործողությունների անվիճելի հաղթանակն անկասկած պայմանավորված էր նաեւ այն հանգամանքով, որ Զանգեզուրի երեք զինվորական շրջանների մարտական ուժերը թեպետ գործել են յուրաքանչյուրն իրեն հատկացված տեղամասում, սակայն գործել են վաղօրոք մշակված կշռադատված ճկուն մարտավարությամբ, փոխհամաձայնեցված, մեկ միասնական հրամանատարությամբ:

Արժանի գնահատելով Զանգեզուրը թուրք բնակչությունից վերջնականապես մաքրելու իրողությունը՝ գեներալ Հախվերդյանը գրում է. «Առաջին խնդիրը, Զանգեզուրի հարավային եւ արեւելյան շրջաններն ու Ղափանը, ինչպես նաեւ Զանգեզուրի եւ Արցախի միջեւ ընկած գոտին թաթար բնակչությունից մաքրումը, կատարվեց փայլուն կերպով: Չնայած համառ դիմադրությանը՝ թաթարական բնակավայրերը հրդեհվեցին, իսկ բնակիչները դուրս քշվեցին:

Արցախի հետ կապող ուղին բացված էր»:[51]

Զարգացնելով հարձակումը, զանգեզուրյան մարտական ուժերը հասնում են մինչեւ Հագարու գետը եւ մահմեդական բնակչությունից լիովին մաքրում այդ շրջանների բնակավայրերը:

Զանգեզուրը մահմեդական բնակչությունից մաքրելու նպատակով հայ մարտական ուժերի ձեռնարկած գործողությունը, իրոք, ընթացել է շատ արագ ու արդյունքում՝ ավելի քան արգասաբեր:

Ս. Վրացյանի գնահատմամբ՝ «Այսպէս կազմակերպւած զանգեզուրցիք մի գրոհով մաքրեցին բուն Զանգեզուրի եւ Ղափանի միջեւ ընկած տարածութիւնը՝ Դոնդարլու-Շուռնուխ-Ասկիլիում թրքական շրջանը, մօտ 30 գիւղ: Մարտին գրաւեց Աւդալար-Ալեանչու-Մուսալմանլար-Բարգիշատ շրջանը, ուր գտնւում էին մօտ 120 թրքական գիւղեր»:[52]

Եթե ընդհանրացնենք ու ըստ էության, անաչառորեն գնահատենք 1920 թ. հունվարի սկզբներին Զանգեզուրում Դրոյի ընդհանուր հրամանատարությամբ տեղի ունեցած գործողությունը, ապա աներկբա պիտի նշել, որ փաստորեն այդ նշանավոր ու չափազանց արգասաբեր գործողության արդյունքում ոչ միայն լիովին մաքրվում է Զանգեզուրի տարածքը մահմեդական բնակչությունից, այլեւ բացվում են Արցախ տանող ուղիները: Ավելին, այն, ինչը ընդամենը երկու օրվա ընթացքում բուն Զանգեզուրում, ապա նաեւ մինչեւ մարտ ամսին՝ Հագարու գետով ձգվող տարածքում, իրականացրին հայկական մարտական ուժերը, անգնահատելի ու կենսական նշանակություն ունեցավ ոչ միայն Զանգեզուրի, այլեւ բովանդակ հայ ժողովրդի կյանքում:

Հարց է ծագում. ինչպիսի՞ իրավիճակում կհայտնվեր Զանգեզուրն ու տարիներ անց ինչպիսի՞ն կլիներ գավառի հայ եւ թուրք բնակչության քանակական հարաբերակցությունը, եթե չձեռնարկվեին վերոհիշյալ գործողությունները:

Եթե նկատի ունենանք, որ մահմեդական բնակչությունն անհամեմատ ավելի արագ է բազմանում, իսկ դա գաղտնիք չէ, ապա այդ հարցի պատասխանը դառնում է միանգամայն ակնառու, հստակ ու հասկանալի:

Ծանոթություններ

1. Իշխանեան Ե., նշվ. աշխ., էջ 326:
2. Տես Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, էջ 312:
3. Տես ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 395, թ. 26-27:
4. Տես նույն տեղում:
5. Տես ՀՅԴ ԲԿԱ (Հ.Յ. Դաշնակցության Բոստոնի Կենտրոնական Արխիվ), ֆ. 1469, գ. 1, էջ 18:
6. Նույն տեղում:
7. Նույն տեղում:
8. Իշխանեան Ե., Լեռնային Արցախ 1917-1920, Երեւան, 1999, էջ 523:
9. Նույն տեղում, էջ 530:
10. Նույն տեղում, էջ 547:
11. ՀՀ ԲԿԱ, (Հայաստանի Հանրապետության Բոստոնի կենտրոնական արխիվ), ֆ. Ս. Վ. (Սիմոն Վրացեան), թծ. 313, գ. 13:
12. Տես ՀԱԱ, Ֆ. 45, ց. 1, գ. 177, էջ 20:
13. ՀՅԴ ԿԱ, թծ. 1649, գ. 3, էջ 2բ:
14. Նույնն տեղում:
15. ՀՅԴ ԿԱ, թծ.1469, գ. 1, էջ 18:
16. Նույն տեղում:
17. ՀՀ ԲԿԱ, ֆ. Ս. Վ. (Սիմոն Վրացեան), թծ/ 313, գ. 13:
18. Տես նույն տեղում:
19. Նույն տեղում:
20. ՀՀ ԲԿԱ, ֆ. Ս. Վ. (Սիմոն Վրացեան), թծ. 8, գ. 14, էջ 2:
21. Տե՛ս նույն տեղում:
22. ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ 177, թ. 19:
23. «Հայրենիք» ամսագիր, 1941, յունիս, էջ 97:
24. ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ 177, թ. 19:
25. Վարդան Գեւորգյանը իր հեղինակած «Լեռնահայաստանի գոյամարտը (1919-1921)» գրքում որպես սկզբնաղբյուր ներկայացրել է գլխավորապես Գարեգին Նժդեհի տրամադրած փաստաթղթերը:
26. Տես Գեւորգյան Վ., «Լեռնահայաստանի գոյամարտը (1919-1921)»; Երեւան, 1991, էջ 42-56:
27. Տես «Բանբեր Հայաստանի Արխիվների», 2005, թիւ 2:
28. Սիմոնյան Ա., Զանգեզուրի գոյամարտը, Երեւան, 2000, էջ 42:
29. Նույն տեղում, էջ 32:
30. «Բանբեր Հայաստանի Արխիվների», 2005, թիւ 2, էջ 199:
31. Տես Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, էջ 335:
32. Նույն տեղում, 337:
33. Տես նույն տեղում, էջ 337:
34. Նույն տեղում, էջ 338:
35. Տես նույն տեղում, էջ 339:
36. Նույն տեղում,:
37. Գէորգեան Վ., նշվ. աշխ., էջ 40:
38. Նույն տեղում, էջ 41:
39. Նույն տեղում, էջ 41:
40. ՀՅԴ ԿԱ, 1649, գ. 3, էջ 2ա:
41. Ավօ, նշվ. աշխ., էջ 482:
42. Նույն տեղում:
43. «Հայրենիք» ամսագիր, 1941, յունիս, էջ 97:
44. Գէորգեան Վ., նշվ. աշխ., էջ 43:
45. Ավօ, Նժդեհ, 1968, Պէյրութ, էջ 482:
46. Նույն տեղում, էջ 481:
47. Նույն տեղում, էջ 482:
48. «Հայրենիք» ամսագիր, 1941, յունիս, էջ 97:
49. Աւօ, Նժդեհ, էջ 483:
50. «Հայրենիք» ամսագիր, 1941, յունիս, էջ 97:
51. ՀԱԱ, Ֆ, 45, ց. 1, գ. 177, թ. 19:
52. Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, էջ 371:

■

Օրակարգում կրթության որակի բարելավման հարցերն են

էջ 2

ներկայացրել զգալի թվով առաջարկությունների փաթեթ:

Իսկ ինչ վերաբերում է բուհերում նշված առարկաների ուսուցմանը, ապա, իմ կարծիքով, պարտադրանքով չէ, որ հայի համար պետք է կարեւորվեն հայոց լեզուն, գրականությունը եւ հայոց պատմությունը: Բուհերն ունեն լայն ինքնավարություն եւ իրենք են հաստատում իրենց ուսումնական պլանները, չեմ կարծում, որ այդ դասընթացները բուհական համակարգից ընդհանրապես դուրս կմնան:

– **Խոսակցություններ են շրջանառվում ձեր մասնաճյուղում մագիստրոսական կրթություն ստանալու հնարավորության, հեռակետային դպրոց ստեղծելու մասին: Որքանո՞վ է իրական այդ ամենը: Այդ մասին Դուք եք բարձրաձայնել երկու տարի առաջ՝ մեր թերթին տված հարցազրույցում:**

– Ձեր նշած երկու խնդիրն էլ հեշտ եւ արագ լուծվողներից չեն: Դրանք կապված են իրավական, ֆինանսական եւ այլ հարցերի լուծման հետ: Ինչպես նախկինում, այնպես էլ այս երկու տարիներին մշտապես շարունակվել են նշված ուղղություններով տարվող աշխատանքները: Հարցի լուծումն իրատեսական է, եւ ՀԱՊՀ ղեկավարությունն ու մենք ձգտում ենք հնարավորինս շուտ լուծում տալ այդ հարցերին:

– **Նոր ուսումնական տարում առաջին անգամ քանի՞ հոգի նստեցին ուսանողական նստարանին եւ ո՞ր մասնագիտությունների գծով: Կա՞ն փոփոխություններ ուսուցանվող մասնագիտությունների առումով: Կարելի՞ է համեմատություններ անցկացնել նախորդ ուստարվա հետ:**

– Մասնագիտությունների առումով փոփոխություն չի եղել, ընդունելություն է կազմակերպվել առկա եւ հեռակա ուսուցմամբ վեց մասնագիտությունով՝ «Տնտեսագիտություն» (առկա եւ հեռակա), «Տեղեկատվական համակարգեր» (առկա եւ հեռակա), «Լեռնային գործ եւ օգտակար հանածոների արդյունահանում» (առկա եւ հեռակա), «Մետալուրգիա» (առկա եւ հեռակա), «Արդյունաբերական եւ քաղաքացիական շինարարություն» (հեռակա) եւ «Օգտակար հանածոների հարստացում» (հեռակա): Նշենք, որ հեռակա ուսուցմամբ երկու մասնագիտության գծով («Տեղեկատվական տեխնոլոգիաներ», «Արդյունաբերական եւ քաղաքացիական շինարարություն»), ցավոք, խմբեր չեն ձեւավորվել. արդյունքում առկա ուսուցմամբ 44 դիմորդից ունեցանք 40 ուսանող, իսկ հեռակա ուսուցմամբ 103 դիմորդից՝ 35 ուսանող:

– **Կուզեինք, որ ներկայացնեիք դասախոսական համակազմը, ովքե՞ր են այսօր դասավանդում մասնաճյուղի ուսանողությանը, քանի՞ դոկտոր, պրոֆեսոր, գիտության թեկնածու: Կա՞ն արդյոք հրավիրված դասախոսներ մայրաքաղաքից:**

– Ներկայումս ուսումնական գործընթացում ներգրավված են գիտությունների երկու դոկտոր, պրոֆեսոր, 11 գիտությունների թեկնածու, դոցենտ եւ ասիստենտ, չորս ասիստենտ եւ 22 դասախոս: Ինչպես միշտ, կապը մայր բուհի հետ սերտ է, անհրաժեշտության դեպքում հրավիրում ենք դասախոսներ, կազմակերպում՝ օնլայն դասեր: Ունենք հրավիրված մասնագետներ նաեւ «ԶՊՄԿ» եւ «Չարարատ-Կապան» փակ բաժնետիրական ընկերություններից:

– **Ուսման վարձավճարների հարցում կա՞ն փոփոխություններ, թե՞ նույնն են մնացել:**

– Վարձավճարները մնացել են անփոփոխ: Առկա ուսուցման համակարգում ուսման վարձերը 390 հազար եւ 450 հազար ՀՀ դրամ են, իսկ հեռակա ուսուցման համակարգում՝ 312 հազար եւ 360 հազար ՀՀ դրամ:

– **Բուհերի՝ ընդունելության քննություններին վերաբերող հայտարարությունների մեջ միշտ կա այսպիսի ձեւակերպում՝ գործում է զեղչերի ճկուն համակարգ. այդպիսին գործո՞ւմ է ձեր մասնաճյուղում:**

- Այո, մեզ մոտ էլ գործում է զեղչերի ճկուն համակարգ: Բերեմ համեմատություն. 2015թ. մասնաճյուղի 58 ուսանող (71 դիմում) օգտվել է զեղչային համակարգից, որի արդյունքում զեղչված գումարի չափը կազմել է մոտ 4 մլն դրամ, իսկ 2019թ. զեղչից օգտվել է 118 ուսանող (178 դիմում), եւ զեղչված գումարի չափը կազմել է մոտ 13 մլն դրամ: Արդյունքում ուսման զեղչից օգտվող ուսանողների թիվն ավելացել է 2 անգամ, իսկ զեղչված գումարի չափը՝ մոտ 3 անգամ:

Նշեմ, որ մասնաճյուղի ուսանողների վարձավճարներ են փոխհատուցում նաեւ այլ կազմակերպություններ՝ օրինակ, նախորդ ուսումնական տարում ուսանողների ուսման վարձ են փոխհատուցել ՀՀ-ում հայ կրթական հիմնարկության մասնաճյուղը, «Չարարատ Կապան» ՓԲ ընկերությունը, «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» բարեգործական հիմնադրամը, Հայ օգնության հիմնադրամը եւ այլ կազմակերպություններ:

– **Մասնաճյուղն ընդգրկվա՞ծ է միջազգային դրամաշնորհային որեւէ ծրագրում:**

– Քանի որ մասնաճյուղն իրավունք չունի ինքնուրույն մասնակցելու միջազգային դրամաշնորհային ծրագրերի մրցույթներին, ուստի հույս ունենք, որ առաջիկայում, ՀԱՊՀ-ում համապատասխան ծրագրերի առկայության դեպքում, մասնաճյուղը եւս կընդգրկվի միջազգային դրամաշնորհային ծրագրերում:

– **Ինչպիսի՞ն է համագործակցությունը մարզի հանքարդյունաբերական ձեռնարկությունների հետ: Որքանո՞վ են ձեր շրջանավարտներն ընդգրկված նրանց գործունեության մեջ, մասնաճյուղի շրջանավարտը կարողանո՞ւմ է ստացած մասնագիտությամբ աշխատանքի տեղավորվել:**

– Մասնաճյուղը համագործակցում է մարզի երեք խոշոր հանքարդյունաբերական ձեռնարկության՝ «ԶՊՄԿ» ՓԲ, «Չարարատ-Կապան» ՓԲ եւ «ԱՊՄԿ» ՓԲ ընկերությունների հետ՝ հիմնականում ուսանողների պրակտիկաների կազմակերպման գծով: Որոշակի համատեղ ծրագրեր ենք իրականացրել մասնագետների վերապատրաստման եւ դասախոսների ստաժավորման առումներով: Սակայն որակյալ ճարտարագիտական կադրերի պատրաստման համար անհրաժեշտ է ավելի խորացնել համագործակցությունը՝ դարձնելով այն փոխշահավետ: Այդպիսի համագործակցության վառ օրինակներ են շուրջ 15 տարվա համագործակցությունը Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի երեւանյան կրթահամալիրի եւ «Սինոփսիս Արմենիա» ՓԲԸ-ի միջեւ, «Երեւանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի եւ երեւանյան հիվանդանոցների միջեւ տասնամյակներ շարունակվող համագործակցությունը, որը, համապատասխան մասնագիտություններով կրթության որակի բարելավման հարցում, տվել է շոշափելի արդյունքներ: Եթե հնարավոր լիներ մարզի կոմբինատների հետ համագործակցությունը հասցնել նման մակարդակի, մասնավորապես՝ համատեղ կազմակերպել ուսանողների ուսուցումը, որն էլ կնպաստեր ուսանողների սովորելու մոտիվացիայի բարձրացմանը. ինչ խոսք, դա շատ արդյունավետ կլիներ եւ՛ մասնաճյուղի, եւ՛ կոմբինատների համար:

Օգտվելով առիթից՝ ցանկանում եմ այս ձեւաչափով երկխոսություն սկսելու առաջարկ ներկայացնել մեր գործընկերներին եւ հույսով սպասում՝ գործատու-գործընկերների դրական արձագանքին:

Գուցե բուհերի եւ գործատուների համագործակցության հարցը պահանջում է նաեւ օրենսդրական նախաձեռնություն՝ համագործակցության պարտադիր պահանջով:

Իսկ շրջանավարտների ստացած մասնագիտությամբ աշխատանքի տեղավորվելու վերաբերյալ Ձեր հարցի առնչությամբ հպարտությամբ կարող ենք արձանագրել, որ մասնաճյուղի շրջանավարտների 50%-ից ավելին աշխատում են այդ ձեռնարկություններում՝ զբաղեցնելով նաեւ ղեկավար պաշտոններ: Նշենք, որ շրջանավարտների գերակշռող մասն աշխատում է մասնաճյուղում ստացած մասնագիտությամբ:

Զրույցը՝ Վահրամ Օրբելյանի

Շնորհակալություն «Ագարակի ՊՄԿ» ՓԲԸ գլխավոր տնօրեն Անդրեյ Սինյակովին

2013 թվականին Ագարակ քաղաքում բացվեց ըմբշամարտի թիմ, որը շատ կարճ ժամանակում հասցրել է բազմաթիվ նվաճումներ ունենալ:

Առողջ եւ ուժեղ սերունդ դաստիարակելու սկզբունքով Երեւան քաղաքից Հայաստանի հարավ՝ Ագարակ եկավ ըմբշամարտի վաստակավոր մարզիչ Յուրի Ավետիսյանը: Մեծ եռանդով ու ոգեւորությամբ անդադար սկսեց պարապել տղաների հետ: Նպատակը մեկն է՝ ունենալ օլիմպիական չեմպիոն:

Թիմն այսօր ունի մոտ 40 ըմբիշ: Շնորհալի ըմբիշ Տիգրան Բունիաթյանն այս տարի հաղթեց Հայաստանի առաջնությունում եւ մասնակցեց Եվրոպայի առաջնությանը, որը մեկ սայթաքման հետեւանքով գրավեց 5-րդ տեղը :

- Ես համոզված եմ, որ գալու է օրը, երբ Ագարակի անունը հնչելու է օլիմպիական դահլիճում, ինչի համար անելու եմ ամեն բան, - ոգեւորությամբ նշում է մարզիչը:

- Մենք անդադար պարապում ենք, տարբեր երկրներ մեկնում՝ ուսումնամարզական հավաքների, մասնակցում տարբեր միջազգային մրցաշարերի եւ, ինչ խոսք, գրեթե միշտ վերադառնում հաղթանակով: *Ու պետք է ասեմ, որ այդ ամենի համար մենք շնորհակալ ենք Ագարակի ՊՄ կոմբինատի գլխավոր տնօրեն Անդրեյ Սինյակովին, ով միշտ աջակցում է մեզ եւ ուրախանում մեր յուրաքանչյուր հաղթանակով: Երախտապարտ ենք իր արած յուրաքանչյուր լավ գործի, մեր կողքին միշտ լինելու համար եւ ուզում ենք, որ նրա պես լավ մարդիկ, բարի մարդիկ մեր կողքին ու մեր համայնքում շատ լինեն,* – իր շնորհակալական խոսքում նշեց Յու. Ավետիսյանը:

Արթուր Բունիաթյան

Դպրոցին պետք է «Հայոց եկեղեցու պատմություն» առարկան

էջ 1

եկեղեցու դավանաբանությանը, ծեսերին եւ խորհուրդներին: Ավելին, հենց առարկայի չդասավանդումը կլինի բնակչության ճնշող մեծամասնության իրավունքների ոտնահարում եւ հակաժողովրդական, ապազգային քայլ:

Կա տեսակետ, որ առարկան անհետաքրքիր է, դասաժամերին երեխաները ձանձրանում են եւ այլն:

Նախ՝ կտրականապես համաձայն չեմ այս պնդման հետ, քանի որ ինքս բազմիցս մասնակցել եմ ավագ դասարաններում ՀԵՊ դասաժամերին տարվող բավականին հետաքրքիր, նույնիսկ կասեի՝ թեժ քննարկումներին: Բայց եթե ինչ-որ տեղ անհետաքրքիր են անցնում դասաժամերը, ապա դա չի խոսում առարկայի ավելորդության մասին: Միշտ էլ կլինեն աշակերտներ, որոնց համար այս կամ այն առարկան հետաքրքիր չէ: Այլապես, նույն հիմնավորմամբ, հավատացնում եմ, կարելի է առարկայացանկից հանել եւ՛ ֆիզիկան, եւ՛ քիմիան, եւ՛ մի շարք այլ առարկաներ:

Ի դեպ, որպես խոսքերիս ապացույց, նաեւ նմանատիպ հիմնավորմամբ ներկայումս փորձ է արվում պետական ԲՈՒՀ-երի պարտադիր առարկայացանկից հանել «Հայոց լեզու», «Հայ գրականություն», «Հայոց պատմություն» առարկաները:

Վերջերս հեռուստատեսային մի քննարկման ժամանակ հնչեց եւս մի տարօրինակ /եթե չասենք անտրամաբանական/ տեսակետ, ըստ որի՝ ՀԵՊ առարկայի դասավանդումը կարող է խոչընդոտել հայրենադարձությանը, քանի որ ներգաղթող որեւէ անձ հնարավոր է չուզենա, որ իր երեխան առնչություն ունենա մեր եկեղեցու դավանանքի հետ:

Անշուշտ, սա հնարավոր է, եթե ներգաղթողը, օրինակ, աղանդավորական է կամ օտարազգի կամ էլ պարզապես ինչ-որ փոքրամասնության ներկայացուցիչ: Սակայն անժխտելի փաստ է, որ Հայաստանից դուրս յուրաքանչյուր վայրում հայկական գաղթօջախները ձեւավորվել եւ ձեւավորվում են բացառապես Հայ Առաքելական եկեղեցու շուրջ, քանզի միայն այս դեպքում է հնարավոր լինում պահպանել հայկական ինքնությունը: Այնպես որ՝ ՀԵՊ առարկայի դասավանդումը ներգաղթելու ցանկություն ունեցող հայի համար կարող է միայն ու միայն գրավիչ դարձնել իր պատմական հայրենիքն ու նպաստել հայրենադարձությանը, եւ ոչ մի կերպ՝ հակառակը:

Չեմ ցանկանում անդրադառնալ մի շարք այլ, երբեմն աբսուրդի հասնող պնդումների՝ ընթերցողից ավելորդ ժամանակ չխլելու համար, սակայն ակնհայտ է, որ եթե ցանկանում ենք ունենալ մրցունակ, ամենավեհ գաղափարների շուրջ կոնսոլիդացված հասարակություն եւ կերտել հզոր պետականություն, ապա «Հայոց եկեղեցու պատմություն» առարկան, Հայ Առաքելական Սուրբ եկեղեցու դավանաբանությունն անպայման պետք է ուսումնասիրվի մեր երեխաների կողմից, քանզի հաղթող է այն ժողովուրդը, որի շարքերում գերակշռում են առաքինություններով օժտված հայրենասերները եւ ոչ թե՝ անհայրենիք, անհավատ, անսեռ, անդեմ, բացառապես սեփական կոմֆորտով մտահոգված «քաղաքացիները»:

Հ.Գ. Այս առիթով ինչ-որ չեն արտահայտվում իրենց հայ եկեղեցու «փրկիչ» անվանող «Նոր Հայաստան, նոր հայրապետ» խմբավորման մասնակիցները: Թե՞ նրանց գործողությունները սահմանափակվում են միայն Վեհարանը պղծելով կամ էլ Վեհափառի նկատմամբ անօրենություններ անելով: Իսկ հայ երեխայի քրիստոնեական դաստիարակությունը նրանց չի՞ հետաքրքրում: Զգոնություն եւ ողջախոհություն ամենքիս... ■

Սատանայի կամրջից մինչեւ Տաթեւի վանք. հիմնանորոգվել է ավտոմայրուղին

Դեռեւս 2010-ին պետք է հիմնանորոգվեր Սատանայի կամրջից մինչեւ Տաթեւ ընկած ավտոմայրուղին, երբ գործարկվեց Տաթեւի ճոպանուղին: Սակայն վերաշինվեց միայն Շինուհայր-Հալիձոր-Սատանայի կամուրջ հատվածը: Ու միայն 2018 թ. աշնանը հաջողվեց շարունակել կիսատ թողածը:

Մոտ 6,2 կմ մայրուղու հիմնանորոգումը, որ ավարտվեց օգոստոսին, իրականացրել է AAB Construction ընկերությունը (ղեկավար՝ Արմեն Բաղալյան):

Ըստ տեղամասի պատասխանատու Տիգրան Հովհաննիսյանի՝ *«Կատարվել են հողային աշխատանքներ, խճապատում, պատրաստվել են կողային առուներ, հենապատեր՝ փլուզվող հատվածների դիմաց, երկու դիտահարթակ, երկու ավտոկայանատեղի, մայթեր՝ Տաթեւի վանք իջնող հատվածում, վաքեր...»:*

Ասֆալտի բարձր որակն անհնար է չնկատել:

– Տեղադրվել է բիտումի տոգորումով շերտ՝ 6 սմ, այնուհետեւ՝ խոշորահատիկ ասֆալտի շերտ՝ 6 սմ եւ մանրահատիկ ասֆալտի շերտ՝ 4 սմ, – ասաց Տիգրան Հովհաննիսյանը:

Սատանայի կամուրջ-Տաթեւ մայրուղու հիմնանորոգումը կատարվել է «Տարածքային զարգացման հիմնադրամի» ծրագրով (ղեկավար՝ Աշոտ Կիրակոսյան) եւ Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ:

Տաթեւ համայնքի ղեկավար Մուրադ Սիմոնյանի հավաստիացմամբ՝ բարձրորակ ճանապարհի շահագործումը նոր լիցք է հաղորդել դեպի Տաթեւի վանք զբոսաշրջիկների այցելությանը, էականորեն դյուրին է դարձրել ենթաշրջանի գյուղերի հետ հաղորդակցությունը:

Սատանայի կամուրջ-Տաթեւ մայրուղու վերին մասը՝ մոտ 320 մ երկարությամբ, սակայն, դուրս է մնացել ծրագրից՝ սողանքային լինելու պատճառով:

Սողանքային այդ հատվածի համար նոր նախագիծ է մշակվում:

Ամենայն հավանականությամբ՝ մայրուղու այդ հատվածը կշրջանցի սողանքային գոտին:

Ինչեւէ, այլեւս ունենք Սատանայի կամրջից Տաթեւի վանք ձգվող՝ պատշաճորեն հիմնանորոգված ավտոմայրուղի, որը, անշուշտ, գնահատանքի է արժանի:

Սամվել Ալեքսանյան

Քարաշենի միջնակարգ դպրոցը՝ Մեծ Սոսի անունով

2019 թ. նոյեմբերի 15-ին Քարաշենի միջնակարգ դպրոցն անվանակոչվեց Լերմենտ Սարգսյանի՝ Մեծ Սոսի անունով:

Լերմենտն այն նվիրյալներից է, ովքեր 1965 թ. Ծիծեռնակաբերդում երդվեցին կռվել հայրենիքի համար:

Եվ եկավ երդումը կոնկրետ գործով փաստելու ժամանակը. Արցախն էր կանչում... Լերմենտը «Մխիթար սպարապետ» ջոկատի հրամանատարն էր: Ջոկատը սխրալից էջեր գրեց Արցախի ազատության համար մղվող պայքարում:

Մեծ Սոսն այնտեղ էր, ուր պահն օրհասական էր, այնտեղ էր, ուր հարկավոր էր անհնարինը հնարավոր դարձնել, այնտեղ էր, ուր մեծ ռիսկ ու խիզախություն էր պահանջվում...

Իսկ որտեղ Մեծ Սոսը՝ այնտեղ կռվի ելքը որոշված էր, որտեղ Մեծ Սոսն էր՝ բարձունքը մերն էր, թշնամու պաշտպանությունը՝ ճեղքված:

Ասել է թե՝ Մեծ Սոսը խիզախության, արիության խորհրդանիշ էր, նա հաղթանակ կռողներից մեկն էր Արցախյան ազատամարտում:

Մեծ Սոսի տղաներն անուրանալի գործ կատարեցին հատկապես Լաչինի, Կոռնիձորի, Շուռնուխի համար մղվող կռիվների ժամանակ, բարձր պահեցին հայրենյաց տան պաշտպանի անունը:

Դպրոցի անվանակոչությանը նվիրված արարողության ընթացքում մեկ առ մեկ թերթվեցին Մեծ Սոսի կյանքի էջերը, իսկ ամեն էջում սեր էր ու նվիրում առ հայրենիք:

Ներկաները՝ Քարաշեն գյուղի մարդիկ, դպրոցի մանկավարժական ու աշակերտական կոլեկտիվները, Մեծ Սոսի մարտական ընկերները, տարբեր տեղերից եկած հյուրերը հպարտություն են ապրում, որ համերկրացին են Մեծ Սոսի, որ մարտնչել են նրա հետ միասին, որ շփվել-ընկերություն են արել նրա հետ:

Իսկ նրա կինն ու երեխաները, մյուս հարազատները, հպարտության հետ մեկտեղ, երախտագիտություն են հայտնում տեղական ու տարածքային իշխանություններին, դպրոցի մանկավարժական կոլեկտիվին, որ չեն մոռացել Մեծ Սոսին, որ անվանակոչությամբ հավերժացնում են նրա հիշատակը:

Մեծ Սոսի կյանքի էջերը «թերթեցին» Քարաշենի միջնակարգ դպրոցի աշակերտները, որ պարտավորվեցին նաեւ՝ լինել ուսման առաջամարտիկ, ու թե անհրաժեշտ լինի՝ Մեծ Սոսի օրինակով դառնալ հայրենիքի պաշտպան:

Դպրոցի պատին փակցված հուշատախտակը բացելու պատիվը տրվեց Մեծ Սոսի կնոջը՝ տիկին Նվարդին եւ որդուն՝ Արմենին: Հուշատախտակիի վրա մակագրված է՝ Լերմենտ Սարգսյան՝ Մեծ Սոս

ê Ëñ ³ Ýù ¹ ³ ÝÙ ³ Ñ ¿«
² ÝáõÝ ¹ Ñ ³ í »ñÅ ¿«
ö ³ éù »õ ËáÝ ³ ñÑáõÙ®

Անվանակոչության արարողության ժամանակ ելույթ ունեցավ դպրոցի տնօրեն Գուրգեն Մկրտչյանը, ով մասնավորապես ասաց. *«Մեծ Սոսը թեեւ երկրային կյանքում կարճ ապրեց՝ ընդամենը 46 տարի, բայց ունեցավ իմաստավորված կյանք: Այդ մասին կարող են վկայել նրա ընտանիքի անդամները, մարտական ընկերները, համագյուղացիները, ճանաչող բոլոր մարդիկ:*

Դպրոցի անվանակոչությունն իր մեջ երկու կարևոր միտում ունի. արժեւորում, գնահատում ենք մեր լավագույն զավակներից մեկի գործն ու հավերժացնում նրա հիշատակը, եւ ապա նրա, ինչպես եւ մյուս ազատամարտիկների օրինակով ավելի բովանդակալից դարձնում մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության գործը»:

Տեղ համայնքի ղեկավար Արթուր Շադունցը նույնպես ուրախություն արտահայտեց առ այն, որ Քարաշենի դպրոցն անվանակոչվեց Մեծ Սոսի անունով:

Անվանակոչության առթիվ ներկայացվեց ԵԿՄ Սյունիքի կառույցի ղեկավար, գնդապետ Մելիքսեթ Պողոսյանի ուղերձը:

Քարաշենի դպրոցի անվանակոչությունը եւ Արցախյան հերոսամարտի մասնակիցներից մեկի հիշատակի հավերժացումը եւս մեկ անգամ վկայեցին, որ ոչինչ եւ ոչ ոք չեն մոռացվում, որ կա հետմահու կյանք...

Ալվարդ Մեսրոպյան

«Սյունիք» ջրօգտագործողների ընկերություն. փապալված կառույցը դուրս է գալիս փակուղային վիճակից

էջ 2

ղը բերք դարձել, կամ որ միեւնույն է՝ եկամուտ: Մարդը պիտի գիտակցի, որ ոռոգման ջուրը նույն կոմունալի մի մասն է, եթե այդ մտայնությունն արմատավորվի ջրօգտագործողի գիտակցության մեջ, հաջողությունը մերը կլինի», – պատմում է զրուցակիցս եւ հավելում, որ շատ քիչ մարդիկ կան, ովքեր կամովին մուծում են օգտագործված ոռոգման ջրի վարձը, իրենք միշտ պահանջում են ու հիշեցնում, հիմա էլ զբաղված են այդ գործով՝ ավելացնելով, որ ընդառաջում են մարդկանց՝ սպասելով, որ իրենց աճեցրած բերքը վաճառեն եւ նոր վճարեն ոռոգման ջրի վարձը:

Առավել պարտաճանաչ են Կապանի ջրօգտագործողները, ճիշտ է, այդ տարածաշրջանում ընդամենը 110 հա հողատարածություն են սպասարկում, հիմնականում՝ տնամերձեր: Հողագործների գերակշռող մասը մարզի մյուս տարածաշրջանում է, Մեղրիում նույնիսկ ութ հեկտարի վրա ոռոգման կաթիլային համակարգ է ներդրված, որ տնտեսապես ձեռնտու է ու խնայողական:

- Իսկ ի՞նչ պատժամիջոցներ են կիրառում պարտապանների նկատմամբ:

- Անբարեխիղճ, անպատասխանատու ջրօգտագործողներ կան: Նույնիսկ կան այնպիսիք, որ վճարման պահը գալու դեպքում ասում են՝ ոռոգման ջուր չենք ստացել: Բայց ջուր չմատակարարելն էլ ծառերի չորանալու պատճառ կարող է դառնալ: Մենք այդ կտրուկ քայլին չենք դիմում, բայց բաժանորդն էլ պարտաճանաչ պետք է լինի իր օգտագործած ջրի դիմաց վճարելու: Եղել է, որ մարդուն երկու օր զրկել ենք ոռոգման ջրից, բայց երրորդ օրը վերականգնել ենք ջրամատակարարումը: Միանգամից մարդուն չես կարող բերել վճարման դաշտ, եթե տարիներով նա սովորել է ոռոգման ջրի դիմաց չվճարել, մեկ օրում նա չի դառնա օրինապաշտ եւ վարձ վճարող: Դա աստիճանական գործընթաց է՝ հիմնված համոզելու մեթոդի վրա:

Ինչեւէ, տարին սահուն փակեցինք, արտակարգ դեպքեր չեղան: Բայց համակարգն արդեն հին է, եւ վթարներն անխուսափելի են՝ տխուր հետեւանքներով: Խողովակաշարերի կապիտալ նորոգման անհրաժեշտություն կա, որոշ տեղերում խողովակն այնքան է բարակել, որ նույնիսկ հնարավոր չէ զոդել, մետաղը վերածվել է հողային զանգվածի:

Ընկերության տեխնիկական հագեցվածությունից տնօրենը գանգատվելու առիթ չունի, պահեստամասերի խնդիր չկա, ապահովված են թե՛ ծառայողական, թե՛ աշխատակիցներին տեղափոխող փոխադրամիջոցներով:

Իսկ հարցերի հարցը երիտասարդ տնօրենը համարում է ջրօգտագործողների ընկերության սասանված հեղինակության վերականգնումը: Նույնիսկ Ազգային ժողովում խոսում են այդ ոլորտում (խոսքը «Սյունիք» ՋՕԸ-ի մասին չէ) գործող կոռուպցիայի, ստվերային այգիների, այլ յուրացումների մասին:

«Պիտի վերականգնենք վստահությունը, այլ ճանապարհ չկա, եթե ջրաշխը ստանում է նվազագույն աշխատավարձ՝ 55 հազար դրամ, ապա երաշխիք չկա, որ իր հավաքած գումարի մի մասը սեփական գրպանը չի դնի: Մարդ պիտի այնքան վաստակի, որ աչքը չգցի ուրիշի ունեցվածքի վրա», – ասում է Գոռ Բարսեղյանը:

Մեղրիում ներդվել է ինքնահոս ջրամատակարարում, բայց դա արդարացնում է այն դեպքում, երբ Մեղրի գետում ջուրը բավարար է: Բայց երբ հուլիս-օգոստոս ամիսներին գետը սակավաջուր է դառնում, նորից գործում է մեխանիկական եղանակը, գործի են դրվում պոմպերը, ինչն էլ բարձրացնում է մատակարարվող ջրի ինքնարժեքը: Բացի այդ, Արաքսի պղտոր ջրերից պոմպերը շարքից դուրս են գալիս, խափանվում են եւ խնդիրներ ստեղծում: Այս խնդրում՝ թունելի վերջում ասես լույսի շող է նշմարվում. նախագծվում է Լիճք բնակավայրի մոտ կառուցել 2 մլն խորանարդ մետր տարողությամբ ջրամբար, որ Մեղրիում կլուծի ոռոգման սեզոնում ինքնահոս եղանակով ջրի մատակարարումը՝ վերջ տալով մեխանիկական եղանակին:

Վահրամ Օրբելյան

Հ.Գ. Երբ նյութը պատրաստ էր տպագրության, համացանցում տեսանյութ տարածվեց «Ոստիկանները բացահայտել են «Սյունիք» ՋՕԸ տնօրինության ապօրինությունները» վերնագրով, ըստ որի «Սյունիք» ՋՕԸ-ում 2017-2019 թթ. թույլ են տրվել չարաշահումներ եւ յուրացումներ: Ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչությունում հարուցվել է քրեական գործ, կատարվում է նախաքննություն: ■

Սյունյաց Երկիր

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
«ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր՝
ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռ.՝ **(0285) 5 25 63,**
(091) 45 90 47,
(077) 45 90 47
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
էլ.կայք՝ www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

«ԳՈՎԱԶԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ»
բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:

® նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Պետական աջակցություն՝ տարեկան 500000 ՀՀ դրամ:

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1200, գինը՝ 100 դրամ:
Ստորագրված է տպագրության 22.11.2019թ.: